

10136

Վ. Ն. ԲԻԼԼ-ԲԵԼՈՅԵՐԿՈՎՍԿԻ

ԿՅԱՆ-ՔԸ ԿԱՆԶՈՒՄ Ե

ՊԻԵՍ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

891.71

F-62

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1937

21 JUL 2006

Վ. Ն. ԲԻԼԼ-ԲԵԼՈՑԵՐԿՈՎՍԿԻ

25 NOV 2010

891.71
Բ-62
պ.

ԿՅԱՆՔԸ ԿԱՆՉՈՒՄ Ե

ԳԻՆՍ ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

Ռուսերենից թարգմանեց
Վ. ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ

ԿԵՕՄ
1010 / 42154



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1937



10136

05 MAR 2013

Պատ. խմբ. Ա. Տեր-Հովնաթյան
Տեխ. խմբ. Մ. Ճիկիրայան
Սրբազբիչ Ա. Հ ա կ ո բ յ ա ն

Հրատ. 3448, Տիրած 2000.
Հանձն. և արտադ. 27-1-37 թ.
Ստորագրված և ապելու
7-2-1937 թ. Ստաֆ. Ա.5.
Պատվեր 203.

Քույրատրված և Ռեպրուա-
րային հսկողության գլխավոր
վարչության կողմից կատար-
ման համար Ա լիտերով ՀՍԽՀ
տահմաններում № 33, 22 ոգոս-
տոսի, 1935 թիվ. Յերիվան:

Уполкрайлит № О — 463
Типография Краевого
Армянского Издательства
„ГРО“, Ворошиловский
пр. № 27.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

- ՉԱԴՈՎ Ա. Վ. — Պրոֆեսոր, ծերունի
- ԳԱԼԻՆԱ. — Նրա ազգիկը, 27 տարեկան
- ՆԻԿԻՏԻՆ — Գալինայի ամուսինը, 40 տարեկան
- ԿԱՇԻՐԻՆ — Քիմիական արեստի կառավարիչ, 39 տարեկան
- ՄԱՎԻՉ Ա. Մ. — Պրոֆեսոր, ծերունի

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՆԻԿԻՏԻՆԸ գրքի պահպանի առաջ, մտածկոտ՝ գրեթե և շնչկում. բերքում ե:

ՆԻԿԻՏԻՆ. (Գիրքն ամուր փակելով) Գրքերը շատ են, չգիտես, վորից սկսել... մարդ մինչև իր մահը չի վերջացնի: (Վրալիս կախում է յեվ ման է գալիս սենյակում) Ի՞նչպես անել: Վեր կողմից մոտենալ: 14 տարի կորցրի... 14 տարի: Յեթե նույնիսկ այդ ժամանակի մի մասը քաղաքացիական կռիվների համար դուրս գանք, այդ դեպքումն էլ մնացածը բավական կլինի բանֆակի, անգամ վուզի համար: Այսքան տարի կորցրի: (ձեռնարկի խփելով) Այսքան տարի, հիմար թափառաշրջիկ, (Հեզնամում) Բնազդի վրա հույս դրեցի: Մենք, բանվորներս, առանց լիտուլթյան ել կարող ենք ապրել: Դիտուլթյունը՝ բուրժուական նախադաշարմունք է: Խեղկատակ:

Մտնում է ԳԱԼԻՆԱՆ՝ մեռիկ պորտֆել յեվ կապոցներ:

ԳԱԼԻՆԱ. Ֆեդյուշա, բարև:

ՆԻԿԻՏԻՆ. (Ուրախ) Գալյա, վերջապես յեկար:

ԳԱԼԻՆԱ. Տխրե՛լ եյրբ:

ՆԻԿԻՏԻՆ. Ե՛լ մի ասի: Առանց քեզ ինձ վորբացած եմ զգում: Առանց քեզ կմեռնեյի:

ԳԱԼԻՆԱ. (Սենյակը կարգի բերելով) Ի՞զուր, սիրելիս, ի՞զուր: Չե՛ վոր դրանով վիշտդ չես փարատի: Դրուլթյունից դուրս գալու միջոցը վշտի մեջ չե:

ՆԻԿԻՏԻՆ. Բայց ի՞նչ անեմ: Ամաչում եմ նույնիսկ փողոց դուրս գալ: Ինձ թվում է, վոր անցորդները յետևիցս ինձ են նայում և փսփսում՝ «Վասարարը... Վասարարը»...

ԳԱԼԻՆԱ. (Միծաղելով) Բան հնարեցիր: (Բարձր ծիծաղում է)

Վնասարար:

ՆԻԿԻՏԻՆ. Իսկ ամոթալի բիժը:

ԳԱԼԻՆԱ. Բայց չե՛ վոր բիժը վշտով չես մաքրի: Ավելի սեռվ միջոցներ են հարկավոր:

ՆԻԿԻՏԻՆ. Սովորե՛ր:

ԳԱԼԻՆԱ. Իհարկե: Այդ է պահանջում կյանքը: Սովորել: Ահա թե ինչ է հարկավոր: Այդ մասին շատ անգամ եմ ասել քեզ:

ՆԻԿԻՏԻՆ. Գալյա, հասկացիր, մինչև սովորեմ, մինչև ձեռք բերեմ անհրաժեշտ գիտելիքները, մի քանի տարի պիտի անցնեն. այդ նշանակում է, մի քանի տարի պետք է կրեմ այդ խայտառակ դրոշմը:

ԳԱԼԻՆԱ. Ինչո՞ւ: Ինչո՞ւ չես այդպիսի մռայլ հեռանկար ստեղծում: Չե՛ վոր դու պետք է նաև կուսակցական կամ հասարակական աշխատանք տանես: Դրանով ել ցույց կտաս քեզ: Վերջապես հենց ուսումով:

ՆԻԿԻՏԻՆ. (Մանր հառաչելով) Վա՛... Այդ բոլորն այն չե, այն չե...

ԳԱԼԻՆԱ. Իսկ ի՞նչ ես ուզում: Դու ի՞նչ ես առաջարկում:

ՆԻԿԻՏԻՆ. Յեթե Ֆրոնտ լիներ, յես անմիջապես կվերադարձնեյի կուսակցության մատահուլթյունը: Իսկ այժմ՝ չգիտես, ինչից սկսեմ:

ԳԱԼԻՆԱ. Բացի այն, ինչ ես յեմ առաջարկում, ուրիշ միջոց չես գտնի: Միայն ինքդ քեզ ես մաշում: Մի նայիր, ինչի՞ նման ես: Նիհարել ես, ծերացել: Այսոր ճաշե՛լ ես:

ՆԻԿԻՏԻՆ. Ճաշել եմ... ճաշել եմ:

ԳԱԼԻՆԱ. Խաբում ես, խաբում ես:

ՆԻԿԻՏԻՆ. Ասոված վկա, չեմ խաբում:

ԳԱԼԻՆԱ. Դրոշ չարժի քո ասովածը:

ՆԻԿԻՏԻՆ. Ազնիվ խոսք:

ԳԱԼԻՆԱ. Տեղյա, դու գիտես, վոր յես տանել չեմ կարող, յերբ սուտը ծածկում են ազնիվ խոսքով:

ՆԻԿԻՏԻՆ. Ազնիվ խոսք, ճաշել եմ:

ԳԱԼԻՆԱ. Յես գիտեմ, վոր դու կյանքումդ, իհարկե, շատ անգամ ես ճաշել: Յես այսորվա մասին եմ հարցնում:

ՆԻԿԻՏԻՆ. (Հանցավոր ժպիտով) Այսօր:

ԳԱԼԻՆԱ. Այո, այսօր:

ՆԻԿԻՏԻՆ. Այսօր՝ վոչ:

ԳԱԼԻՆԱ. Այդպես ել գիտեյի: Իսկ ինչո՞ւ:

ՆԻԿԻՏԻՆ. Ախորժակ չունեյի: Ճիշտն ասած, յերեկ ել չեմ ձաշել:

ԳԱԼԻՆԱ. Անմիջապես զնա ձաշարան: Կոմ վոչ, նստի՛ր, յես ինքս կվաղեմ:

ՆԻԿԻՏԻՆ. Պետք չե, Գալտիկա, պետք չե: Դու հոգնած ես: Յես ինքս կզնամ:

ԳԱԼԻՆԱ. (Ազատվելով) Բեզ չեմ հավատում: (Կատակով) Բայ թող, թե չե, աղանջը կկծեմ: (Փախչում է դուրս):

ՆԻԿԻՏԻՆ. (Յեսեվից) Լնջիս ես դու, սքանչելի՛ր յես դու: Յեթե դու չլինեյիր, յես վշտից հարբեցուլթյան կտայի ինձ: Չլսեցի քեզ: Չլսեցի քո իմաստուն խորհուրդը: Այժմ, ահա հատուցում եմ: (Մոլեգիմ) Տխմար:

Դուք ծեծում եմ: Մտնում է ԿԱՇԻՐԻՆԸ:

ԿԱՇԻՐԻՆ. Բարե, Տյոզոր:

ՆԻԿԻՏԻՆ. (Վեր բռնելով) Կաշի՛րին, Պավլո՛ւշկա... Փրո՞ղ... (Գրկախառնվում են):

ԿԱՇԻՐԻՆԸ, ՆԻԿԻՏԻՆԻՆ գրկած վեր է բարձրացնում:

ՆԻԿԻՏԻՆ. Վորտեղից ես գալիս:

ԿԱՇԻՐԻՆ. Սիբիրից, յեղբայր, Սիբիրից:

ՆԻԿԻՏԻՆ. Յերկար ժամանակով ես յեկել:

ԿԱՇԻՐԻՆ. Բանի դեռ չեն քշել:

ՆԻԿԻՏԻՆ. Ի՞նչ ես անելու մեղ մոտ:

ԿԱՇԻՐԻՆ. Բիմիական տրեստ եմ կառավարելու:

ՆԻԿԻՏԻՆ. Ո՛ր, գրո՞ղ: Իսկ շատ է անցել այն ուրից, յերբ քեզ հետ միասին նավ էյինք բեռնում: Այդ ի՞նչպես հասար այդ կյանքին:

ԿԱՇԻՐԻՆ. Շատ հասարակ: Ինքը կյանքը հասցրեց: Սովորեցի: Արդյունաբերական աղաղեմիան եմ ավարտել: Այբեհարանով սոցիալիզմ չի կառուցվի:

ՆԻԿԻՏԻՆ. Ճիշտ է: Իսկ Սիբիրում ի՞նչ էյիր անում:

ԿԱՇԻՐԻՆ. Բիմիական արդյունաբերությունն էյի զարգացնում: Միայն գիտե՞ս, յես «Սիբիր» անունը կփոխեյի: Ի՞նչ կարիք

կա թողնելու: Խուլ վայր, աքսոր, ետապներ... դրանք անցյալն են հիշեցնում: Պետք է ուրիշ անուն գտնել:

ՆԻԿԻՏԻՆ. Համաձայն եմ: Իսկ ծննդավայրում յեղա՞ր:

ԿԱՇԻՐԻՆ. Յեղա: Պառազները մեռել են: Յեղբայրներս կուլտուրում են:

ՆԻԿԻՏԻՆ. Գյուղը փոխվել է:

ԿԱՇԻՐԻՆ. Այո: Վաթսուն տոկոսը կուլտուրում են: Բլրի վրայի յեկեղեցին հիշում ես: Գրեթե ին կարմիր դրոշակ է կախված: Ակումբ: Մանկամուր: Գյուղը չես ձանաչի:

ՆԻԿԻՏԻՆ. Վաղուց չեմ յեղել այնտեղ: Կարիք ել չկա: Մերոնք բոլորը մեռել են:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ ո՞ր են կինդ, աներդ:

ՆԻԿԻՏԻՆ. Աներս սանատորիայումն է, իսկ Գալյան շուտով կգա:

ԿԱՇԻՐԻՆ. Դե, իսկ դու ի՞նչ ես անում:

ՆԻԿԻՏԻՆ. (Տխուր) Չանձրանում եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Չանձրանում ես... Դ՞ու...

ՆԻԿԻՏԻՆ. Այո, յես:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ:

ՆԻԿԻՏԻՆ. Հետադիմեցի: Կյանքից յես մնացի: Կուլտուրաս պակաս է: (Պառզ) Գրագիտությունն, իհարկե, գիտեմ: Բչից-շատից սովորել եմ, բայց դրանք դատարկ բաներ են: Ե՛... (Չեմք բախաճարում է) Ի՞նչ ասեմ: Ավելի լավ է դու քո մասին պատմիր: Այդ ինչպե՞ս յեղավ աղաղեմիան ավարտեցիր, արդյունաբերական հրամանատար դարձար:

ԿԱՇԻՐԻՆ. Բայլ առ քայլ: Ինչպես քարքարոտ սարը բարձրանալիս: Նախ և առաջ ձեռնարկեցի ինքս ինձ, իմ կենցաղը, ժամանակը կազմակերպել, բոլոր պայմաններում մի ժամ, յերկու ժամ կորդել՝ պարապելու համար: Սկզբում շատ զժվար եր հաղթահարել սովորական դանդաղաշարժությունն, բայց հետո վոչինչ, վարժվեցի, իսկ յերբ սխտեմը սովորական դարձավ, գործն սկսեց ավելի արագ ընթանալ, նույնիսկ ժամանակ էյի գտնում ավճիկների յետևից ընկնելու և սպորտով զբաղվելու:

ՆԻԿԻՏԻՆ. (Տխուրյամբ) Իսկ յես վոչ սխտեմ ունեմ, վոչ գիտություն: Բնազդի վրա հույս դրի: Ի՛րա համար ել այժմ հասցում եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ի՞նչ է պատահել:

ՆԻԿԻՏԻՆ. Յերեք տարով զրկվել եմ պատասխանատու աշխատանք տանելու իրավունքից:

ԿԱՇԻՐԻՆ. (Չառնացած) Ինչպէս թե: Կատանկ ես անում:

ՆԻԿԻՏԻՆ. Ձեռք զարկեցի որինակելի բնակավայր կառուցելու:

ԿԱՇԻՐԻՆ. Հետո, հետո:

ՆԻԿԻՏԻՆ. Բայց դուրս յեկավ ֆասարարութիւն:

ԿԱՇԻՐԻՆ. Վնասարարութիւն:

ՆԻԿԻՏԻՆ. Ճարտարագետը ֆասարարը դուրս յեկավ: Շան վորդին ինձ խաբեց: Նրան բանտ նստեցրին, իսկ ինձ՝ յերեք տարով վզակոթիս տվին:

ԿԱՇԻՐԻՆ. Այո, ցավալի յե:

ՆԻԿԻՏԻՆ. Ընդհանուր շինարարութիւնը մասնակցելու համար յես հանձն առա այդ գործը, սակայն պրակտիկան ցույց տվեց, վոր առանց ուսման հետու գնալ չի կարելի: Հարկավոր ե տեսնիկան իմանալ:

ԿԱՇԻՐԻՆ. Այո, առանց թերրիայի վատ ե: Տասնինը թիվը չե:

ՆԻԿԻՏԻՆ. Հենց այդ ե, վոր կա: Իսկ յես գործում եյի ինչպես տասնինը թվին: Դրա համար ել տուժեցի:

ԿԱՇԻՐԻՆ. Այժմ ինչ ես անում:

ՆԻԿԻՏԻՆ. (Գտն հառաչելով) Անցաթղթերի սեղանի վարէչ եմ: Իսկ հիշում ես, պարտիզանական ջոկատի հրամանատար եյի, քաղաքներ եյի զբաղում, ռազմական պարզանք ունեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ ինչ ես մտածում անել:

ՆԻԿԻՏԻՆ. Ստանան գիտի: Գիտութիւն ե հարկավոր: Իսկ ինչպէս ձեռք բերեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Այնքան ել սարսափելի չե: Ժամանակ դեռ ունեմ:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ, 40 տարի յե անցել: Հեղափոխութիւնից առաջ կորցրած տարիների համար այնքան ել չեմ ախոսում, հանցանքն ի՞մը չե, բայց հեղափոխութիւնից հետո կորցրած տարիների հանցանքն արդեն իմն ե: (Յույց ցալով գրեցր) Այս բոլորը կարգալու, բժրանելու համար, հարկավոր ե դպրոցական նստարանից սկսել, այլ վոչ թե ձերացած հասկում:

ԿԱՇԻՐԻՆ. Յերևակայում եմ, ինչ ձերունի յես: Պարտադիր ել չե, վոր դու անպայման պրոֆեսոր դառնաս:

ՆԻԿԻՏԻՆ. Յեթե վորակյալ բանվոր լինեյի, արտադրութիւն մեջ բոլոր ուժերս կլարեյի, վրայիցս ամոթալի բիծը մաքրելու: Բայց ինչ կարող եմ անել այժմ: Հաշմանդամի նման նստել և անցաթղթեր եմ գրում:

ԿԱՇԻՐԻՆ. Դու ինչ հաշմանդամ ես:

ՆԻԿԻՏԻՆ. Նու, ուղեղի հաշմանդամ: Ի՞նչ տարբերութիւն: Տեսնե՛ր թե ինչպէս աչքիդ առաջ աճում են քեզ նմանները, տեսնել ինչպէս յերիտասարդութիւնը զալիս անցնում ե քեզանից, — նախանձելի չե, այլ ամոթ ե: (Պառզա) Ահա ինչ դրութիւն մեջ են իմ գործերը:

ԿԱՇԻՐԻՆ. (Վե ե կեցում յե՛վ քայլում սեմյակում) Բո գրութիւնն այնքան ել անհույս չե: Այդ մասին մենք դեռ քեզ հետ կխոսենք, իսկ առայժմ յես մի բան կարող եմ ասել քեզ. ինչպէս ել շուռ տաս, այնուամենայնիվ պետք ե սովորես:

ՆԻԿԻՏԻՆ. Այդ ինքս ել լավ եմ հասկանում:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրեմն ել ինչո՞ւ ժամանակ կորցնել: Գործի անցիր: Եր քանի տարի՝ և դու այնպէս կբարձրանաս, վոր ինքք քեզ չես ճանաչի: Վոչ միայն բիծը կմաքրես, այլև կորցրած ժամանակը կվերադարձնես:

ՆԻԿԻՏԻՆ. Հասկանում եմ, սկսելն ե դժվար. մեկ ել վախեցնում եմ, (գրեցր վասնացույց անելով) չկարողանամ հաղթահարել:

ԿԱՇԻՐԻՆ. Հիմար: Մի՞թե յես ուրիշ խմորից եմ:

ՆԻԿԻՏԻՆ. Այդ այդպէս ե:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրեմն ել հարցն ինչո՞ւնն ե: Յես քեզ կոգնեմ:

ՆԻԿԻՏԻՆ. (Տոսանվում ե) Կմտածեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ի՞նչ մտածելու բան կա:

ԳԱԼԻՆԱ. (Մտնելով) Բարե: Ո՞ւնն ե քեզ մոտ բերել ալլահը:

ՆԻԿԻՏԻՆ. Պավլուչկա Կաշիրին: Շատ եմ պատմել քեզ նրա մասին:

ԳԱԼԻՆԱ. Ա՛ճա՛. Հիշում եմ, հիշում եմ: Շատ ուրախ եմ: Բարե ձեզ: Յես ձեր մասին լսել եմ: Ծանոթ եմ, լավ ծանոթ եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Յես նույնպէս ձեզ հետ լավ ծանոթ եմ: Յյոզորը գրել ե: Նույնիսկ ձեր բնութագրերը գիտեմ:

ԳԱԼԻՆԱ. Իսկ յես ձերը, վոր դուք Յյոզորի հետ մի զորամասուսն եք ծառայել, Կրակել եք, նահանջել, հարձակվել: Ամեն տեսակ թևեր, գնդացիներ, շտաբներ և մասշտաբներ: Ասացե՛ք, զո՞ւք ել այժմ զրա նման փալաս եք (Նիկիտինին մտնանք անելով):

ԿԱՇԻՐԻՆ. (Ժպտալով) Ինչպէս հասկանալ այդ:

ԳԱԼԻՆԱ. Նույնպէս շփոթված, անվճռական: Խորհրդային Հավատ:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ, նա արդյունաբերական ակադեմիան է ավարտել: Գիտական տրեստ է կառավարում:

ԳԱԼԻՆԱ. Ահա թե ինչ: Մերում եմ: Վոչ թե քիմիական տրեստները կառավարչներին, այլ ճարպիկ մարդկանց եմ սիրում: Ահա սա (Նիկիտինին ցույց տալով) վերջին ժամանակներս կորցրել է իր ամբողջ յեռանդը, տիրում է, գանգատվում է «Յեռ եմ մնացել, յետ եմ մնացել»: Տեղ չի գտնում իր համար:

ԿԱՇԻՐԻՆ. Նա արդեն իր ամբողջ վիշտը բաց է արել իմ առաջ:

ԳԱԼԻՆԱ. Ընկեր Կաշիրին, ողնեցեք ինձ թափ տալ դրան, դեպի կյանքը վերադարձնել: Ընկերական ոգնութուն ցույց տվեք ինձ:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ ասպարիզում արդեն մի քիչ բան արված է:

ԳԱԼԻՆԱ. (Ուրախացած) Համաձայնության յեկանք:

ԿԱՇԻՐԻՆ. (Խորամանկորեն նայելով Նիկիտինին) Համարյա:

ԳԱԼԻՆԱ. (Նիկիտինին) Ճիշտ է:

ՆԻԿԻՏԻՆ. Կատածեմ:

ԳԱԼԻՆԱ. Մտածելու ինչ կա:

ԿԱՇԻՐԻՆ. Չեմք:

ԳԱԼԻՆԱ. Դե...

ՆԻԿԻՏԻՆ. (Չեմք բախարհելով, վեճակով) Լավ:

ԳԱԼԻՆԱ. Ուռա: Վերջապես: Ընկեր Կաշիրին, դուք ել ուսանելու նախորդակին այսպես դիվանարում ելիք:

ԿԱՇԻՐԻՆ. Կարծեմ վոչ... Չեմ հիշում:

ՆԻԿԻՏԻՆ. Նա ամուր մարդ է...

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ մտքով:

ՆԻԿԻՏԻՆ. Մինչև կոկորդը կազմակերպված է:

ԳԱԼԻՆԱ (Կարասիները տեսնելով) Այ, դա ուրիշ բան է: Այ, այդպիսիներին հարգում եմ, գուցե այն պատճառով, վոր ինքս այդպես չեմ: Բայց ինչո՞ւ մինչև կոկորդ: Այդ արդեն չափազանց է:

ԿԱՇԻՐԻՆ. Փյոդորը չափազանցեցնում է: Իսկ դուք ձեզ հարգում եք:

ԳԱԼԻՆԱ. (Կիսակատակով) Մոսկալի:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ ի՞նչ գործի յեք:

ԳԱԼԻՆԱ. Յես նախադարձողական եմ: Մանկավարժ: Շրջանային հրահանգչուհի յեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Բայց դուք, կարծեմ, անկուսակցական եք:
ԳԱԼԻՆԱ. Դժբախտաբար, չեմ հասունացել: Մի բան դեռ պակասում է:

ՆԻԿԻՏԻՆ. Համարձակու՞թյուն:

ԳԱԼԻՆԱ. Այո, յես վախենում եմ, վոր ուժերս չեն բավի մեծ, անձնագոհ գործի համար:

ՆԻԿԻՏԻՆ. (Գնկեռեն խփելով նրա ուսին) Բայց մնացած բաներում Գալինան մերն է:

ԳԱԼԻՆԱ. Ներքնապես, յես, իհարկե, հեղափոխական եմ, կուսակցության անկուսակցական անդամ:

ՆԻԿԻՏԻՆ. Հաստատում եմ:

ԳԱԼԻՆԱ. Ընկեր Կաշիրին, ուզում եք ճաշել:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ, շնորհակալ եմ:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում թույլ տվեք ձեր ընկերոջը ճաշելու: Նա ծոմ է պահում: Յերեք որը մի անգամ է ճաշում:

ԿԱՇԻՐԻՆ. Իզուր:

ԳԱԼԻՆԱ. (Նիկիտինին) Դե, գնա, գնա, նահատակ: Գնա ճաշել:

ՆԻԿԻՏԻՆ. (Գնալով) Յես շուտով կվերադառնամ:

ԳԱԼԻՆԱ. Գուցե դուք ել քաղցած եք, ընկեր Կաշիրին: Մի քաշվեք:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ պիտի քաշվեմ: Չեմ քաղցիկ հո չեմ:

ԳԱԼԻՆԱ. Չեմ կասկածում: Դուք ավելի նման եք խիզախ մարտիկի, անվեհեր կործին, քան ջահել աղջկա:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ ձեզ դուր չի՞ գալիս:

ԳԱԼԻՆԱ. Ընդհակառակը: Բայց դուք, յերևի դաժան մարդեք:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ, վճռեղից հնարեցիք այդ:

ԳԱԼԻՆԱ. (Խորամանկորեն) Դիտե՛մ... Լսել եմ: Ձեր բարեկամ է ընկեր Փյոդորից:

ԿԱՇԻՐԻՆ. Այսինքն:

ԳԱԼԻՆԱ. Նա ինձ պատմել է մի դեպքի մասին, յերբ դուք սառնասրտությամբ գնդակահարել եք ձեր ընկերոջը: Յե՛վ ցավալին այն է, վոր Փյոդորն այդ մասին խոսում է վորպես պատկան յերևույթի մասին: Իսկ յես բոլորովին այլ կարծիքի յեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ա՞յն է:

ԳԱԼԻՆԱ. Նման գործողութուն կատարող մարդն, անկասկած, իր բնավորությամբ պետք է դաժան, անգութ մարդ լինի:

ԿԱՇԻՐԻՆ. (Լրջաճալով) Իսկ դուք լսվ եք հիշում ձեզ պատ-
մած գեպքի մանրամասնությունները:

ԳԱԼԻՆԱ. Ազոտ կերպով: Սակայն փաստն է կարևորը:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ, տվյալ դեպքում կարևոր են մանրամասնու-
թյունները: Յեռ ձեզ կհիշեցնեմ դրանք: (Խլաս յեվ հասուկ) Սպի-
տակները նահանջելով, գնդակահարում էյին գերզած կարմիր
բանակայիններին: Սվինով պատուել էյին կոմիսարի փորը: Մի
քանի ժամ եր մնացել կոմիսարին ապրելու: Նրա ցավերն այնպես
անտանելի էյին, վոր նա աղերսում եր բժշկին թունավորել կամ
գնդակահարել իրեն: Իժիշկը, բարոյական նկատառումներով
հրաժարվեց: Իրավացի յեր նա:

ԳԱԼԻՆԱ. Ձգիտես: Դիսկուսիոն հարց ե:

ԿԱՇԻՐԻՆ. Պատասխանեցեք ուղղակի:

ԳԱԼԻՆԱ. Նու, ասենք բժիշկն իրավացի չեր:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ յես իրավացի էյի, ընկերոջս տանջանքից
ազատելով:

ԳԱԼԻՆԱ. Թերևս:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրեմն, ի՞նչ դատանություն և անգթություն հարց
կարող ե լինել:

ԳԱԼԻՆԱ. Թերևս յես սխալվում եմ: Սակայն ասացեք, կարո՞ղ
էյիք դուք այդպես սպանել նաև, ասենք, ձեր բարեկամ Ֆյոդո-
րին կամ ձեր սիրած մարդուն:

ԿԱՇԻՐԻՆ. Յեթե դա ծայրահեղորեն անհրաժեշտ լիներ՝ կա-
րող էյի:

ԳԱԼԻՆԱ. Իսկ յես չէյի կարող:

ԿԱՇԻՐԻՆ. Դա ձեր ոգտին չի խոսում:

ԳԱԼԻՆԱ. Ընդունում եմ: Բայց այդպիսի գործողություն ըն-
դունակ մարդը պետք է առանձնահատուկ ջղեր ունենա:

ԿԱՇԻՐԻՆ. (Իրմեղով ներս մտնող Նիկիտինին) Ֆյոդոր, պետք է
լսեյիք, թե քո բացակայություն ժամանակ յես ինչպիսի բնու-
թյակի ստացա:

Նիկիտին. Յերևակայում եմ: Իսկ դու պետք է լսես, թե նա ինչպես
է ինձ հետ սիրո մեջ բացատրվում. պարտիզան, ծուլ, Աբլոմով...
ԳԱԼԻՆԱ. Բայց մի՞թե յես իրավացի չեմ:

Նիկիտին. Իրավացի յես, իրավացի...

ԿԱՇԻՐԻՆ. Սակայն իմ նկատմամբ մասամբ սխալվում եք:

ԳԱԼԻՆԱ. Կապրենք՝ կատենենք:

ՉԱԴՈՎ. (Ձեռքին մի պորտեթել յեվ կլոր փոքրած փաթեթներ)
Բարե, զավակներս:

ԳԱԼԻՆԱ. Հայրիկ Վերադարձա՞ր: (Համբուրում է հար) Ի՞նչ-
պես համարձակվեցիր, մի քեզ թույլ տվեց:

Նիկիտին. Սանատորիայից փախել ես:

ՉԱԴՈՎ. Փախա, յեղջերույից ավելի արագ, ավելի արագ, քան
նապաստակը՝ արծվից:

ԳԱԼԻՆԱ. Սա ընկեր կաշիրինն է, Ֆեդյայի մանկություն ըն-
կերը: Անցյալում արեխավոր, ներկայումս՝ քիմիական արեստի
կառավարիչ:

ՉԱԴՈՎ. (Սեղմելով Կաշիրինի ձեռք) Մեր յերկրում այդպիսի
բաներով չես դարձացնի:

Նիկիտին. վերցնում յեվ մի կողմ է դնում պորտեթելը: ԳԱԼԻՆԱն ուղղում է
հար ուղիք:

ԳԱԼԻՆԱ. Ինչո՞ւ յես ժամանակից առաջ յեկել, անհանգիստ
ծերուկ: Մոռացել ես, վոր դու հիվանդ ես: (Կաշիրինին) Սա նո-
րերս կաթված է ստացել: Ուղարկել են սանատորիա, իսկ նա
այնտեղից փախել է: Վոչ մի կարգապահություն. և դեռ հին բու-
շիկ է, գիտնական...

Նիկիտին. Այնքան Վասիլյեվիչ, իդուր ես վերադարձել: Շուտ
է, շուտ...

ՉԱԴՈՎ. Դ՞ու ել սրանց նման:

ԳԱԼԻՆԱ. Խայտառակությունն է:

Նիկիտին. Դու սովորելու կարիք չունես, շտապելու հարկ
չունես: Կարող էյիր խաղաղ հանգստանալ:

ՉԱԴՈՎ. Դնացեք դուք ել... Հանգստանալ... Իսկ ի՞նչ ասել է
հանգիստ: Բուրժուական հասկացողությունը, դա պարսպություն
է, դատարկ ժամավաճառություն, բուսական կյանք, բացարձակ
պորտաբուժություն: Այդ տեսակ հանգստից կարելի յե լուրջ
հիվանդանալ:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ դուք ինչպես եք պատկերացնում հանգիստը:

ՉԱԴՈՎ. Խաղաղ պայմաններ ստեղծագործական աշխատանքի
համար:

ԳԱԼԻՆԱ. Այսինքն՝ նստել սանատորիայում կամ հանգստյան
տանը և շարունակել աշխատել:

ՉԱԴՈՎ. Միանգամայն ճշմարիտ է, զավակս:

ԳԱԼԻՆԱ. Ո՛ր, վոչ: Չես խաբի:

ՉԱԴՈՎ. Արդե՞ն:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ կասեք սրան: Նա, ինչպես յերևում է, արդեն մի բան արել է: Յես այդ տեսնում եմ նրա չարածձի աչքերից:

ՉԱԴՈՎ. Միանգամայն ճիշտ է:

ԳԱԼԻՆԱ. (Ծաղրելով) Միանգամայն ճիշտ է... Միանգամայն ճիշտ է... Ասա, ի՞նչ ես արել:

ՆԻԿԻՏԻՆ. (Կատակելով) Մտրդ ես սպանել:

ՉԱԴՈՎ. Ծերուկիս հասակում այդ տեսակ գործով չեմ զբաղվում:

ԿԱՇԻՐԻՆ. Սիրահմարվել եք:

ՉԱԴՈՎ. Դժբախտաբար սանատորիայում գտնվող միակ որրորդի տարիքն անհամապատասխան էր:

ՆԻԿԻՏԻՆ. Շատ յերիտասարդ էր:

ՉԱԴՈՎ. Կուսատաժը զրեթե Ֆրանսական մեծ հեղափոխության ժամանակից էր և բացի այդ՝ ոժտված էր այնպիսի առավելութուններով, ինչպիսին է դնովի ատամները, վոր ճաշելիս վայր էր ընկնում:

ԿԱՇԻՐԻՆԻ (Ծիծաղելով) Յես այժմ հասկանում եմ, թե ինչու յեղջերույից արագ է փախել:

ՆԻԿԻՏԻՆ. (Ծիծաղելով) Լավ կյանքից մարդ չի փախչի:

ԳԱԼԻՆԱ. Կատակը մի կողմ: Այնուամենայնիվ ասա մեզ, ինչո՞ւ յես ժամանակից առաջ թողել սանատորիան:

ՉԱԴՈՎ. Վորովհետև յես այնտեղ՝ իմ մեթոդով՝ հիսնալի հանգստացա: Կաթվածը, մահվան այդ տռաջին նախանշանը, ինձ շարժեցրեց, բայց չվախեցրեց: Յես պատրաստվեցի մահվան: սակայն այն, ինչ յես արեցի սանատորիայում, մահվան հարցն ինձ շփոթեցնում է: Ինձ համար շատ անհրաժեշտ է դոնս յերկու տարի տպրել:

ԳԱԼԻՆԱ. Բժիշկները հավատացնում են, վոր դու յերկու տասնյակ տարի յել կապրես, յեթե...

ՉԱԴՈՎ. (Կտրելով) Յեթե վոչինչ չանեմ, յեթե աչքերս հանեմ դատարկ տարածության մեջ և լուսնոտի նման թափառեմ սանատորիայից սանատորիա. խորին շնորհակալություն: Յես պետք է ավարտեմ խոշոր, պետական կարեվորություն ունեցող մի հայտնագործություն:

ԿԱՇԻՐԻՆ Հետաքրքիր է:

ԳԱԼԻՆԱ. (Հեգնանքով) Ամերիկա յես գտել:

ՉԱԴՈՎ. Այո, Ամերիկա: Նոր Ամերիկա, ավետյաց յերկիր, վորն իր տարածությամբ հավասար է ամբողջ Արևմտյան Յեզրոպային: Այդ Ամերիկան մեր յերկրին կտա սիրիոնավոր հեկտար բերքառատ հող և անսպառ հարստություն: Մոտիկ ապագայում, ժամանակակից տեխնիկայի պայմաններում, նա կծածկվի թավապատ դաշտերով, քաղաքներով, ինդուստրիայով:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ բոլորն ապագայում:

ՉԱԴՈՎ. (Համոզված) Այո, մոտիկ ապագայում:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ այժմ՝ ի՞նչ կա այնտեղ:

ՉԱԴՈՎ. Յուրա, ձյուն, սառույց, տունդրա և տայգա...

ԲՈԼՈՐԸ. Սիրվեր:

ՉԱԴՈՎ. Գտաք: Նրա հյուսիս-արևելյան և արևելյան մասերը:

ԳԱԼԻՆԱ. (Հուսալաք) Դա ի՞նչ Ամերիկա յե:

ՆԻԿԻՏԻՆ. Այն, վոր Սիբիրում հանքային հարստություններ կան, ամբողջ աշխարհին է հայտնի:

ԳԱԼԻՆԱ. Յեվ ապագայի ինդուստրիայի մասին ել խոսելու հարկ չկա: Ինդուստրիան այժմ ել կա:

ԿԱՇԻՐԻՆ. Միայն թավապատ դաշտերի մասին յես շատ եմ կասկածում:

ՉԱԴՈՎ. Ինչո՞ւ:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչպես հայտնի յե, այնտեղի բնությունն ու կլիման չեն համապատասխանում:

ՉԱԴՈՎ. Իսկ յես ուզում եմ, վոր համապատասխանի:

ԿԱՇԻՐԻՆ. (Քմիծաղ) Հիանալի... Բայց այդ ինչպե՞ս անել:

ՉԱԴՈՎ. Գաղտնիքն ել հենց այդտեղ է: Յես ուզում եմ վորտեղ կլիման, իսկ նա կփոխի բնությունը:

Կարն պառգա: Բայրն իրար են նայում:

ԳԱԼԻՆԱ. Հայրիկ, դու, պատահաբար չե՞ս... (Յուր թալով նախաբեր):

ՉԱԴՈՎ. Վոչ, աղջիկս, չե...


ԿԱՇԻՐԻՆ. Կարելի՞ յե իմանալ բանն ինչու՞ն է, յեթե գաղտնիք չե:

ՉԱԴՈՎ. Իհարկե գաղտնիք չե: Յես արդեն սանատորիայից գիտատեխնիկական խորհրդին ուղարկել եմ իմ նախագծի առաջին վարկանաթը, կոնսպեկտը:

ԳԱԼԻՆԱ. Ինչո՞ւմ ե կայանում նա, ընկեր Կորումբոս:
ՉԱԴՈՎ. Յես առաջարկում եմ Սիբիրի կլիման փոխել և դարձ-
նել, ասենք, Սկանդինավյան թերակղզու կլիմայի նման:
ՆԻԿԻՏԻՆ. (Գոտակով) Հասարակ բան:
ՉԱԴՈՎ. Յես ուզում եմ... Գալոչկա, բեր այստեղ յերկրա-
գունդը... Ահա այստեղ, Ճապոնիայի ափերով անցնում ե կու-
րասիվո կոչված տաք հոսանքը: Այդ հոսանքը, ինչպես տեսնում
եք, Ճապոնիայից անցնելով, ապարդյուն կորչում ե բաց ավիա-
նոսում: Իմ խնդիրն ե՝ բռնել այդ տաք հոսանքը և թաթարա-
կան ծոցի վրայով քշել այն դեպի Սիբիրի ափերը:
ԳԱԼԻՆԱ. Հետո ի՞նչ:
ՉԱԴՈՎ. Հետո... Հոսանքը խիստ կփոխի կլիման: Տունդրա-
շերը կօլխոզների և սովխոզների կվերածվեն:
ԳԱԼԻՆԱ. Ինչպես հեքյաթում:
ՆԻԿԻՏԻՆ Իսկ ի՞նչպես պիտի փոխես այդ հոսանքը:
ՉԱԴՈՎ. Յերկար պատմությունն ե: Յերկու խոսքով չի ասվի:
Ցանկանացողները կարող են ծանոթանալ, ահա այս կոնսպեկտի
հետ: (Յույց ե ցալիս հաստ սեքը):
ԿԱՇԻՐԻՆ. (Իմեմ իրեմ) Տունդրաները կվերածվեն կօլխոզների
և սովխոզների:
ԳԱԼԻՆԱ. Կծածկվեն կանաչ գորգերով...
ՆԻԿԻՏԻՆ. Վնաս չի տա...
ՉԱԴՈՎ. Յես ձեր դեմքին հեգնանք եմ տեսնում: Դա ինձ քիչ
ե անհանգստացնում: Ավելի ցավալի կլինի, յթե այդպիսի հեգ-
նանք յերևա նաև իմ գիտնական կոլեգաների դեմքերին: Հարկ
կլինի ապացուցել, համոզել, պայքարել, յեռանդ և ուժ վատնել,
իսկ դա կարող ե ինձ համար ծանր լինել:
ԿԱՇԻՐԻՆ. Յես ժպտացի ձեր մտքերի թուխքի վրա: Նա չա-
փաղանց հետաքրքիր ե, բայց գործնականում հեշտ իրագործվող
չե: Բարդ խնդիր ե:
ՆԻԿԻՏԻՆ. Յե՞վ հսկայական միջոցներ կպահանջի:
ՉԱԴՈՎ. Արդյունքի համեմատությամբ, այդ միջոցներն ան-
նշան են: Իսկ յթե խոսենք բարդության մասին, ապա շատ ավելի
բարդ եր մայր Ռուսաստանն ինդուստրիալ յերկիր դարձնելը:
ԿԱՇԻՐԻՆ. Դա, թերևս, ճիշտ ե:
ԳԱԼԻՆԱ. Դո նախագիծը զարմանալի յե, յթե պատկերաց-
նելու լինենք նրա հեռանկարները, բայց այդ բոլորն ազագա-

յում: Իսկ այժմ յես կցանկայի, Բրիտանիոյ Կորումբոս, վոր դու-
վերադառնայիր սանտոտրիա:
ՉԱԴՈՎ. Հիմար-հիմար մի խոսիր: Այն, ինչ յես առաջարկում
եմ, միանգամայն ռեալ ե և իրագործելի: Ինձ ավելի ուրիշ բան
ե անհանգստացնում—մահն ե անհանգստացնում: Իր անտեղի միջո-
ւտությամբ նա կարող ե ինձ հետ միասին վոչնչացնել նաև իմ
նախագիծը: Այդ պատճառով հարկավոր ե շտապել: Եթե, Յյոզոր,
քո առողջության մեկ քառորդը յեթե իմը լիներ...
ՆԻԿԻՏԻՆ. Իսկ ինձ՝ քո գիտության մեկ քառորդը:
ԳԱԼԻՆԱ. Առևտուր մի անեք: Հայրիկ, սիրելիս, չի կարելի
այդ բոլորն առանց հուզմունքի և լարվածության: Ձե վոր դա
քեզ համար... գիտես...
ՉԱԴՈՎ. Գիտեմ, գիտեմ... Ամեն ոք յես սպասում եմ գիտա-
տեխնիկական խորհրդի նախկին տեղակալ, ներկայիս նախագահ
պրոֆեսոր Սավիչի պատասխանին: Չնայած նա բուլղիկ չե, բայց
առաջավոր բանիմաց մարդ ե: Յես նրան վաղուց եմ ճանաչում:
Հին բարեկամս ե:
ԳԱԼԻՆԱ. Մինչև քո նախագծի իրագործվելը, յես, հավանո-
րեն, կարող կլինեմ ձեզ համար թեյ պատրաստել (Գնում ե):
ՆԻԿԻՏԻՆ. Առանց քաջքշուկների չի լինի:
ՉԱԴՈՎ. Յես վստահ եմ Սավիչի վրա: Նախագծի հետագա
մշակումն ինձ չի անհանգստացնում: Ընդհակառակը, ստեղծագործ
աշխատանքը թարմացնում և յերիտասարդացնում ե: Բժիշկներին
չեմ հավատում: Նրանք հին շկոլայի տեր մարդիկ են, անկենդան
Յես ինձ զգում եմ կոմյերիտական:
ԿԱՇԻՐԻՆ. Ձեր տեսքն այդ չի ասում:
ՉԱԴՈՎ. Դատարկ բան ե: Ի՞նչ բան ե տեսքը... Կարևորն
ինքնազգացումն ե: Յես յերջանիկ եմ, վոր ալբեցի մինչև հեղա-
փոխությունը, վոր նրան կարող եմ նվիրել մեծ դժվարությամբ
ձեռք բերած իմ գիտելիքները:
ԳԱԼԻՆԱ. Ընկեր Բրիտանիոյ, նամակ:
ՉԱԴՈՎ. (Առագ վերցնում ե) Սավիչից ե:
ԳԱԼԻՆԱ. Միայն խնդրում եմ, հանգիստ, հանգիստ:
ՉԱԴՈՎ. (Չպելով իրեմ) Յես հանգիստ եմ: (Կարծես դիտ-
մամբ, յերկար զբաղվում ե ծառով, դանդաղորեն բացելով այն)
Յես հանգիստ եմ:
ԳԱԼԻՆԱ. (Անհամբեր) Դի. շուտ արա... շուտ:

75/124



ՆիկիՏիՆ. Հանկարծ նախագիծն ընդունված լինի միանգամից:
առանց ձգձգումների:

ԶԱԴՈՎԸ կարգում է մտնում, բոլորն սպասում են:

ԳԱԼԻՆԱ. Բարձր, բարձր:

ԶԱԴՈՎ. (Բարձրօձայն կարգում է) «Տեսականորեն քո նախագիծը չափազանց հետաքրքիր է, միայն թե դու, Ալեքսեյ Վասիլիչ, իզուր չես պահպանել բժշկական ուսման, խանգարել ես հանգիստը: Սպասում ենք քո լրակատար և շտապ առողջանալուն: Քո բարեկամ Ս. Մ. Սավիչ»:
(ձմռանում է նամակը) Այդպես... (Հեզուսաբան) Տեսականորեն նախագիծը հետաքրքիր է, իսկ գործնականորեն՝ յերևակայություն: Յես տեսնում եմ Սավիչի դեմքի շփոթությունը, հեզունքը նրա կուրբաների դեմքերին: Մերունին, ըստ էյուկթյան, ցնդել է: (Հայացքը նորից դարձնում է դեպի նամակը յեվ կարգում) «Իզուր չես պահպանել բժշկական ուսման, խանգարել ես հանգիստը»:
(Դառն հեզուսաբան) Վոչ, թանկագին կուրբաներ, վոչ, ուսյալ Արլոմոններ, յես կխանգարեմ և իմ, և ձեր հանգիստը: Յես կդիմեմ ավելի բարձր: Յես կդիմեմ կուսակցությունը: Մենք դեռ կպայքարենք: Մենք դեռ կպատերազմենք:

ԳԱԼԻՆԱ. Հայրիկ, սիրելիս, մի հուզվիր:

ԶԱԴՈՎ. Յես կպատրաստեմ մանրամասն դեկլոցում, գծագրեր, թվեր, պլաններ և նույնիսկ նախահաշիվ:

ԿԱՇԻՐԻՆ. Հանգիստ, հանգիստ:

ՆԻԿԻՏԻՆ. Ի՞նչ հարկ կա տաքանալու: Դու կհաղթես:

ԶԱԴՈՎ. Յես ընդունում եմ մարտահրավերը:

ԳԱԼԻՆԱ. (Տխուրաբլամբ) Սկսվում է:

ԶԱԴՈՎ. (Կայտառ) Սկսվում է:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմի վրա յերկու սենյակ, բաժանված միջնապատով և դռներով: Աջ կողմը Նիկիտինի և Գալինայի սենյակն է, ձախ կողմը՝ Չարովի: Նիկիտինը մազերը խառնած ու խորասուզված, համառորեն կարդում է փնթփնթալով: Չարովը գծագրերի վրա յե աշխատում: Նրա սեղանի վրա՝ գլխուս, գրքեր, քարտեզ:

ԶԱԴՈՎ. (Յես բնկնելով արուի քիզունքին) Ո՞՞՞... հոգնեցի, բայց նախագիծը գրեթե ավարտված է: Մնում է միայն զեկուցումը գրել: Իսկ հետո... (Մի րոպե մտածում է) Հետո կտեսնենք: (Նորից խոնարհվում է գծագրերի վրա):

ՆԻԿԻՏԻՆ. Ֆո՛ն... հոգիս դուրս յեկավ... գլուխս բան չի մտնում: Ի՞նչ է լինելու հետո: (Մտածումն փնթնելի մեջ է բնկնում, սքափվում է, կարծես վանելով ծանր մտքերը, մի ուսմկա տղի յե խմում յեվ դարձյալ վերցնում է գիրքը):

ԳԱԼԻՆԱ. (Շնմբան) Դու դեռ սերտո՞ւմ ես: Ո՞ւր է քո սխառեմը: Նայիր, ի՞նչ ես դարձել: Դա ուղղակի անմտություն է (Վազում է սեղանի մոտ յեվ ծածկում է գիրքը) Առաջ անկարելի յեր գրքի անուն տալը, իսկ այժմ գրքից կտրել չի լինում:

ՆԻԿԻՏԻՆ. Ի՞նչ է պատահել, ի՞նչ ես պանիկա գցում:

ԳԱԼԻՆԱ. Չե՞ վոր դու ինձ խոստացար այս յերեկո հանգստանալ, գնալ կինո կամ թատրոն: Այսպես վոր գնա, շուտով դու. բոլորովին կմախք կդառնաս: Չորս ամիս էլ չի անցել, բայց արդեն չով ես դառել, Ո՞ւր է քո սխառեմը:

ՆԻԿԻՏԻՆ. (Շիբը ցույց տալով) Ահավասիկ: Ժամը մեկ — մի գավաթ:

ԳԱԼԻՆԱ. Դա ի՞նչ է:

ՆԻԿԻՏԻՆ. 40 աստիճանի նարգան:

ԳԱԼԻՆԱ. Ոգնում է:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչպէս ասեմ... Բիչ վոր խմում ես՝ կիսատ ե մնում, շատ ես խմում՝ սահմանն անցնում ե: Վոչ մի կերպ չափը չեմ կարողանում գտնել, չափի զգացում չունեմ:

ԳԱԼԻՆԱ. Յեզ դու մտածում ես այդ սխտեմը գործադրել նաև ուսման մեջ:

ՆԻԿԻՏԻՆ. Յես դա միայն փորձում եմ... Գիտակա՞ն եքսպերիմենտ:

ԳԱԼԻՆԱ. (Շեւր վերցնելով) Յեթե մեկ ել տեսնեմ այս եքսպերիմենտը, յես լուրջ կբարկանամ... Զգվելի յե:

ՆԻԿԻՏԻՆ. (Բռնելով նրա ձեռքը) Մի նեղանար, Գալոչկա: Այլևս չեմ անի: Ծիշոն ասած, յեթե դու չլինեցիր, յես այսոր վշտից կխմեցի: Այնքան վերավորական ե, վոր ասել չի կարելի:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ ե պատահել:

ՆԻԿԻՏԻՆ. Այսոր բջջի բյուրոյի ընտրութիւնն եր: Թեկուզ մեկն ու մեկը հիշեր իմ ազգանունը: Կարծես յես կենդանի յե չեմ: Կարծես յես անհարգաատ տարր եմ: Ամոթից պատրաստ եյի գետինը մտնել:

ԳԱԼԻՆԱ. Բան չկա, Յեդյա: Շատ բանում դու ինքդ ես մեղավոր, բայց այնքան ել սարսափելի չե: Միայն թե խիղճդ մաքուր լինի կուսակցութեան առջ: Աշխատիր սովորել: Դեռ կարող ես ըտ աշխատանքով ցույց տալ քեզ:

ՆԻԿԻՏԻՆ. Սովորել: Հեշտ ե ասել: Վորչափ շատ եմ կարդում, այնչափ ափելի յեմ տեսնում, ինչքան հետաքրքիր ե դա, վորքան անհրաժեշտ ե, և յես ինչքան քիչ բան գիտեմ, ինչքան յետ եմ մնացել: (Իրենքը ցույց տալով) Ահա այստեղ մեծ մարդկանց ուղեղներն ե ժառանգութիւնն մնացել մեզ, իսկ յես՝ իմայն այժմ հասկացա այդ: Բանի՞ տարի կորցրի: Բանի՞ տարի: (Օտնը հառաչում ե):

ԳԱԼԻՆԱ. Բավական ե: Հերիք ե: Կաշերինը չի յեկել:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ:

ԳԱԼԻՆԱ. Ինչու յե նա սկսել ուշ-ուշ դալք քիչ ե պարապում հետդ:

ՆԻԿԻՏԻՆ. Ժամանակ չունի:

ԳԱԼԻՆԱ. Գուցե նրա համար անհաճո յե իմ ներկայութիւնը, իմ քննադատութիւնը: Նա ինքնասեր մարդ ե:

ՆԻԿԻՏԻՆ. Բոլորովին վոչ. ընդհակառակը, դու նրան շատ ես դուր գալիս:

ԳԱԼԻՆԱ. Նու, չե՞ մի: Դիվանագիտութեան ե բանեցնում:

ՆԻԿԻՏԻՆ. Իզուր ես այդպես կարծում:

ԳԱԼԻՆԱ. Դե, աստված նրա հետ: Հագնվիր և դուրս յեկ փողոց՝ մաքուր ու շնչելու (Գլխարկը ծածկելով նրա գլխին) Գնա... (Հրում ե դուրս) Չմտածես մեկ ժամից շուտ վերադառնալ: Շեմքից ներս չեմ թողնի:

ՆԻԿԻՏԻՆ. Լսում եմ թանկագին հրամանատար: Լսում եմ, Գալոչկա:

ՁԱԴՈՎԸ տեղից վեր բռնելով, սրբվելով վազում ե դպի դուրս յեկ փակեցը գցում. ԳԱԼԻՆԱՆ դուրս ծածկելով ՆԻԿԻՏԻՆԻ յետեվից, մտնում ե միջնորմին յեկ դուրս ծեծում:

ՁԱԴՈՎ. Ո՞վ ե:

ԳԱԼԻՆԱ. Իբր չգիտես: Բաց արա: Բաց արա:

ՁԱԴՈՎ. (Դիտմամբ սեփում ե) Գալոչկա, յես դեռ անկողնում եմ: Մուլանում եմ վեր կենալ:

ԳԱԼԻՆԱ. Բեզ ասում եմ՝ բաց արա:

ՁԱԴՈՎ. Ա՛խ, վորչափ վաստակար անձնավորութիւնն ես դու: Արդին քունս տարել եր:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ ինչուքն ե: Ժամը 10-ին արդեն անկողնումն ե: Յես քեզ բան պիտի հայտնեմ:

ՁԱԴՈՎ. Վաղը առավոտը կհայտնես:

ԳԱԼԻՆԱ. Բաց արա, թե չե մինչև առավոտ կծեծեմ: (Օտնը ծաւմ ե):

ՁԱԴՈՎ. Մի ծեծիր միայն, իսկույն կբանաս (Բացում ե):

ԳԱԼԻՆԱ. Ահա թե ինչպես ես քնում—հագնված:

ՁԱԴՈՎ. Յես հենց նոր պատրաստվում եյի պառկել:

ԳԱԼԻՆԱ. Այդպես, այդպես...

ՁԱԴՈՎ. Բիչ ե մնում վերջացնեմ: Թույլ տուր: Չե վոր յես միշտ զիջում եյի քեզ, յերբ դու փոքրիկ եյիր:

ԳԱԼԻՆԱ. Իզուր: Իսկ յես քեզ վոչ մի պայմանով չեմ զիջի: Աշխատանքը հավաքիր և մարշ անկողին: Դու ամբողջովին դեղնել ես:

ՁԱԴՈՎ. Դա արևից ե: Արևն ե խանձել:

ԳԱԼԻՆԱ. Արե՞փս ե խանձել:

ՁԱԴՈՎ. Այսոր, ըտ խորհրդի համաձայն, յերկու ժամ արևի տակ տապակվեցի:

ԳԱԼԻՆԱ. Տապալկվեցիր: Մարտի արևի տակ:

ՉԱԴՈՎ. Յես այդ չեյի ուզում ասել... ուզում եյի ասել—

տաքացա:

ԳԱԼԻՆԱ. Այսօր նույնիսկ արև չի յեղել:

ՉԱԴՈՎ. Մի՞թե:

ԳԱԼԻՆԱ. Անմիջապես անկողին:

ՉԱԴՈՎ. Չեմ ուզում:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչպես վարվեմ յես քեզ հետ:

ՉԱԴՈՎ. Վոչինչ չի ոգնի:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում յես կսկսեմ բղավել քո ականջին:

ՉԱԴՈՎ. Հպատակվում եմ... միայն, աղաչում եմ, թույլ տուր
գծագիրը վերջացնում.

ԳԱԼԻՆԱ. Թույլ չեմ տա: (Հօրք քառ ե քալիս դեպի անկողին,
հանում ե ցրա կոթիկներ):

ՉԱԴՈՎ. (Անոգնակաճ) Արարիչ աստված, ինչ տանջանք ե
չափահաս աղջկա հայր լինել... Բայց հասկացիր, յիթե հանկարծ
ինձ... վոչ, վոչ, վոչ կաթված, այլ ասենք, մրսեմ:

ԳԱԼԻՆԱ. Ա՛յ, հենց այդ չմրսելու համար հրամայում եմ...

Ձանգի ձայն:

ՉԱԴՈՎ. Ձանգահարում են:

ԳԱԼԻՆԱ. Հավանորեն Ֆեդյան ե: Արդեն թարմացավ: (Գնում
ե հօրեվան սենյակը) Յես հիմա նրանց ցույց կտամ: (Չափվք
առիթից ոզսվելով, գուլպաներով անսենում ե սեղանին յեվ ցօրից
առխառում):

ԳԱԼԻՆԱ. (Դուռը չբանալով): Կորիք այստեղից, անտանելի,
հեռացիր, ներս չեմ թողնի:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ:

ԳԱԼԻՆԱ. (Կարմրելով) Ա՛խ... (Դուռը բացելով) Ներեցեք,
սիրելիս, այդ յես ձեզ չեյի ասում, այլ Ֆյոդորին:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ նրան ինչու:

ԳԱԼԻՆԱ. Իբ բնավորության համար: Ուժով եմ գուրս արել
փողոց՝ թարմ ոգ շնչելու: Գլխացավ ե սկսվել... Նա համարյա
ուժասպառ ե յեղել:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ սխտեմն ինչպե՞ս:

ԳԱԼԻՆԱ. Այսօրվանից սկսել ե ողի լսմել:

ԿԱՇԻՐԻՆ. Կատակ եք անում:

ԳԱԼԻՆԱ. Ահա ձեզ իրային ապացույց: (Նիւր ցույց քալով):

ԿԱՇԻՐԻՆ. Լսվ ե:

ԳԱԼԻՆԱ. Քանի յես մոտն եմ, նա իրեն որինավոր ե պա-
հում, բայց յես ամբողջ ուրը տանը չեմ: Բացի հիմնական աշխա-
տանքից, մի շարք հասարակական պարտականություններ եմ
կրում, իսկ տանը յես յերկու յերեխայի դայակ եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչ յերեխաներ:

ԳԱԼԻՆԱ. Աժուսնուս ե հորս:

ԿԱՇԻՐԻՆ. Լսվ յերեխաներ են:

ԳԱԼԻՆԱ. Հարկավոր ե նրանց կերակրել, հաղցնել, դաստիա-
րակել:

ԿԱՇԻՐԻՆ. Շահագործում են ձեզ:

ԳԱԼԻՆԱ. Նրանք գանգատվում են, վոր ընդհակառակը, յես
եմ նրանց շահագործում:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ դուք ինչո՞ւ յեք ձեզ վրա վերցնում այդ ծան-
րությունը: Մի՞թե նրանք չեն կարող իրենք իրենց կառավա-
րել:

ԳԱԼԻՆԱ. Իրենք: Մի շաբաթվա մեջ նրանք կմամուկալեն:
Գիտեք, հեշտ չե չափահաս մարդկանց դաստիարակելը: Ընկեր
Պավել, յես ձեզ կխնդրեյի հաճախ այցելելիք մեզ ե ոգնելիք
ինձ՝ Ֆյոդորին դաստիարակելու:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրախությամբ: Այդ առավել ես հնարավոր ե,
վորովհետեւ իմ խնդրանքը, այս որերս ինձ բնակարան են հատ-
կացնելու ձեր տանը:

ԳԱԼԻՆԱ. Դա շատ լավ ե:

ԿԱՇԻՐԻՆ. Յեվ դուք չեք վախենա ինձ հետ մի հարկի տակ
ապրելուց:

ԳԱԼԻՆԱ. Յես ապահով եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրեմն դուք չեք փոխել ձեր կարծիքն իմ մասին:

ԳԱԼԻՆԱ. Առայժմ վոչ: Իմ ջննադատությունից զգուշացած,
դուք, իհարկե, կաշխատեք դառնալ հեզ դառնուկ:

ԿԱՇԻՐԻՆ. (Բարեհոգի) Վոչ, յես, ավելի լավ ե, կաշխատեմ
մնալ այնպես, ինչպես կամ:

ԳԱԼԻՆԱ. Տեսնենք: Յերբ կտեղափոխվեք մեզ մոտ ե կսկսեք
հաճախակի այցելել մեզ, այդ ժամանակ կտեսնենք, թե ինչ
պտուղ եք դուք:

ԿԱՇԻՐԻՆ. Խնայեցեք:

ԳԱԼԻՆԱ. Յերևակայում եմ, քանի հանցագործությունն կա ձեր խղճի վրա, քանի կին եք գլխահան արել: Գիտականորեն դուք ամուսնությունն, իհարկե, ժխտում եք, սակայն Ֆլիբաի համար մարքսիստական բազա չեք գտնում: Դուք իսկական...

ԿԱՇԻՐԻՆ. Դոն-ժուան:

ԳԱԼԻՆԱ. Վոչ, Ջեկ փոր թափող:

ԿԱՇԻՐԻՆ. (Ծիծաղելով) Ո՛ր...

ԳԱԼԻՆԱ. Վոչ, իսկապես: Ինձ հետաքրքրում է ձեր անձնական կյանքը:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ յե դա ձեզ այդպես հետաքրքրում:

ԳԱԼԻՆԱ. Ինտիմ կյանքը բաց է անում մարդու եյությունը, ցույց է տալիս նրա իրական դեմքը, Դուք, հարկավ, չեք ժխտի, վոր ձեր կյանքում շատ անգամ եք հրապուրվել:

ԿԱՇԻՐԻՆ Չեմ ժխտում:

ԳԱԼԻՆԱ. Այնուամենայնիվ՝ մենակ եք: Յես իհարկե, նկատի չունեմ ամուսնությունն իր քաղցրենիական նշանակությամբ:

ԿԱՇԻՐԻՆ. Յես ձեզ հասկանում եմ:

ԳԱԼԻՆԱ. Համաձայնվեցեք, վոր դա մասամբ տարրինակ է:

ԿԱՇԻՐԻՆ. (Ծիծաղելով) Տարրինակ վոչինչ չկա: Ուղղակի չեմ հանդիպել համապատասխան որյեկտի:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ նուրբ ճաշակ: Միթե այդ բոլորը կուտուրայի հետևանք է:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ, յես այդպես եմ յեղել նաև իմ նախնական վիճակում:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում ի՞նչ է պահանջվում ձեր որյեկտի համար: Մեծ երուզիցիան: Հասարակայնություն:

ԿԱՇԻՐԻՆ. Դա այնքան ել վատ չէ, բայց պարտադիր չէ:

ԳԱԼԻՆԱ. Մեսսակրինայի տեմպերամենտը:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ, այդ արդեն չափազանց է:

ԳԱԼԻՆԱ. Գուցե, ընդհակառակը, կույս Մարիամի հեղությունը:

ԿԱՇԻՐԻՆ. Նու, վոչ... միայն վոչ այդ...

ԳԱԼԻՆԱ. (Ծիծաղելով) Կամ, գուցե, դուք կողմնակից եք թե՛ վավոր Երոսի տեսությանը:

ԿԱՇԻՐԻՆ. Նույնպես վոչ:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում ի՞նչ եք դուք ցանկանում. ի՞նչ է ձեզ հարկավոր:

ԿՇԻՐԻՆ. Յես կցանկանայի հանդիպել սովորական կնոջ, վորը նման լիներ...

ԳԱԼԻՆԱ. Նու, նու...

ԿԱՇԻՐԻՆ. Վորը նման լիներ ձեզ...

ԳԱԼԻՆԱ. (Շփոթված) Ահա ինչ... Այդ ինչ է, կատակ, թե՛ ձեր պրիոմներից մեկը:

ԿԱՇԻՐԻՆ. Միանգամայն լուրջ եմ ասում:

ԳԱԼԻՆԱ. Ուրեմն, աստված հաջողի: Այդ տիպը կինը վրեժ-խնդիր կլինի ձեզանից բոլոր մեղքերի համար:

Մտնում է ՆԻԿԻՏԻՆԸ:

ԳԱԼԻՆԱ. Զրոսնեցիք:

ՆԻԿԻՏԻՆ. Բարև, Պավլուշկա: (Սեղմում է ձեռքը):

ԳԱԼԻՆԱ. Ֆեդյա, ընկեր Պավելը մեր տանն է ապրելու:

ՆԻԿԻՏԻՆ. Յես ինքս եմ առաջարկել նրան: Հաճախ կայցելի. քացի դրանից, ակտիվորեն կոզնի: Ծերուկին չեմ ուզում անհանգստացնել, աշխատանքից կտրել:

ԳԱԼԻՆԱ. Ա՛խ, այո... ծերուկի մասին մոռացա: Նա, խարդախը, հավանորեն հանգամանքից ոգտվելով, շարունակում է տնքալ աշխատանքի վրա: (Վազում է Զաղովի մոտ) Այդ թիչ ես անում: Վերջապես վերջ տալու յես քս այդ տունդրաներին:

ԶԱԴՈՎ. Անպայման վերջ կտամ: Անպայման: Բացի յեղջերուներից նրանք ումն են հարկավոր:

ԳԱԼԻՆԱ. Անմիջապես քնիր:

ԶԱԴՈՎ. Քնում եմ... քնում... Ամեն ինչ ավարտված է:

ԳԱԼԻՆԱ. Տեսքը վատ է, հայրիկ, ինձ դուր չի գալիս դեմքիդ գույնը:

ԶԱԴՈՎ. Այդ քեզ թվում է Դա միբաժ է: Յես ինձ հիանալի յեմ դըում: Յես նույնիսկ չեյի հրաժարվի վորևե տաք բան խմելուց, որինակ, թեյ:

ԳԱԼԻՆԱ. Իսկույն, թանկագինս, գնամ տաքացնեմ, իսկ դու առայժմ պառկիր: (Քնում է):

ԶԱԴՈՎ. (Հոգնած) Այո, հարկավոր է պառկել: (Նստում է դիվանի վրա) Հոգնեցի: Կղիմանում արդյոք մինչև պայքարի վերջը:

ԿԱՇԻՐԻՆ. (Նիկիթիմի) Այդ բոլորը հիմարություն են: Ուզեցիր վազելով լեռը բարձրանալ, բայց շունչդ կտրվեց: Միանգամից ես ուզում: Ով ե յետևիցդ ընկել:

ՆԻԿԻՏԻՆ. Խայտառակության դրոշմը: Նա ճնշում է ինձ: Ընկերներս խույս են տալիս ինձանից ինչպես բորոտից, անուշադրության են ժատնում: Յես նկատում եմ, վոր ինձնից ճնշվում են, ծածուկ բոյկոտի յեն յենթարկում: Այո, յես մեծ սխալ գործեցի: Իրա համար ինձ հարվածեցին: Ճիշտ է: Ինձ հարկավոր է հարվածել, բայց ինչու անզգայության աստիճան: Չե վոր կուսակցության համար յես մնում եմ նույն Նիկիտինը, ինչ վոր եյի տասնինը թվին: Լավ չե:

ԿԱՇԻՐԻՆ. Այո, լավ չե: Սակայն դու չես չափազանցնում: Խիստ կասկածամտության հետևանք չե՞ արդյոք:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ, այդպես է:

ԿԱՇԻՐԻՆ. Բոլոր ընկերներդ այդպես են վերաբերվում:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ, այդ ասել չեմ կարող:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ դեպքում, յեթե յես քո տեղը լինեյի, այսպես կդատեյի՝ հիմարների համար որենք չկա գրած, իսկ առողջ մտածողություն. ունեցողն ընդունակ է սխալը գիտակցական հանցագործությունից զանազանել:

ՆԻԿԻՏԻՆ. Այդ այդպես է:

ԿԱՇԻՐԻՆ. Միայն թե կարիք չկա պոչը սեղմել: Քեզ պահիր հանգիստ, արժանիքդ մի կորցնի: Դու հանցավոր ես, բայց քո վարքագծով մի խորացնի հանցանքդ:

ՆԻԿԻՏԻՆ. Դու իրավացի յես:

ԿԱՇԻՐԻՆ. Սակայն դառնանք ուսմանը: Ուրեմն, ինչպես ասում ես, աշխատանքի ընթացքում այդպես կոնծելու պատճառն ամոթանքի գրոհն է:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ միայն դա: Մեր տեմպերը: Յերը պիտի հասնեմ նրանց: Յես հո քսան տարեկան չեմ... Յես մի քայլ առաջ եմ անցնում, իսկ կյանքը վերստով է առաջ դնում: Ինձ անհրաժեշտ է տեսականորեն ամրապնդվել, ընդհանուր կրթություն, վորակ ձեռք բերել, վորպեսզի ազատվեմ անտանելի անցաթրվածների սեղանից և անցնեմ կենդանի աշխատանքի:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ բոլորն այնքան էլ սարսափելի չե, յեթե զինվես համբերությամբ, աշխատես սխտեմով, այլ վոչ թե ցնորվածի պես: Այլապես, զգուշացնում եմ՝ վոչինչ դուրս չի գա: Յեվ

ուսումը չես ավարտի, և առողջությունդ կկորցնես: Ֆիզիկոլոգիա-բայով պարագիծ ես:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչո՞ւ: Յես և դու այդ կուսուրայով բավականաչափ զբաղվել ենք, յերբ մեջքներովս բեռներ եյինք կրում:

ԿԱՇԻՐԻՆ. Խմում ես:

ՆԻԿԻՏԻՆ. Սակավ: Տարին յերկու, յերեք անգամ:

ԿԱՇԻՐԻՆ. Սաստիկ:

ՆԻԿԻՏԻՆ. Գիտակցությունս կորցնելու աստիճան:

ԿԱՇԻՐԻՆ. Հիանալի սխտեմ է: Յեվ Գալինան վոչինչ չի ասում:

ՆԻԿԻՏԻՆ. Նու, ինչ էս ասում: Յես այդ անում եմ նրա բացակայության ժամանակ: Իսկ դու միթե չես խմում:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ դա միթե անհրաժեշտություն է:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչպես է քեզ հաջողվում այդ: Ո՞վ է սովորեցրել քեզ:

ԿԱՇԻՐԻՆ. Չեմբերլինը, Մակդոնալդը, Լյոյդ-Չորլը, Բուգոլինը: Նրանք յուրաքանչյուրը յոթանասուն տարեկան են, բայց նայիր, ինչպես են աշխատում: Ստեղծագործական հասակումս են զգում իրենց, իսկ ինչո՞ւ: Վորովհետև ոեժիմ են պահպանում, ֆիզիկոլոգիայով են պարապում, կուլտուրական կյանք են վարում:

ՆԻԿԻՏԻՆ. Այդ բոլորը ճիշտ են: (Դուրս ձեռում են) Մտեք (Սավիչին տեսնելով), Պրոֆեսոր Սավիչ: (Բարեվում ե յեվ ներկայացնում Կաթիրիմին) Ընկերս, Կաշիրին:

ՍԱՎԻՉ. Շատ ուրախ եմ: Սավիչ, Սերգեյ Միխայլովիչ: (Նիկիթիմին) Ընկեր Նիկիտին, յես կուզենայի տեսնել նաև Գալինա Ալեքսեևնային, յերկուսիդ հետ մի կարևոր պորժի մասին խոսելու:

ՆԻԿԻՏԻՆ. (Արոտ առաջարկելով) Նստեցեք: Իսկույն կկանչեմ: (Դուրս բացելով) Գալինա, այստեղ յեկ:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ է պատահել:

ՆԻԿԻՏԻՆ. Պրոֆեսոր Սավիչն է յեկել:

ԳԱԼԻՆԱ. Բարև ձեզ, Սերգեյ Միխայլովիչ: (Սեղմում է ձեռքը): ՍԱՎԻՉ. Յես յեկել եմ խոսելու Ալեքսեյ Վասիլյեվիչի վիճակի մասին:

ԳԱԼԻՆԱ. Ավելի ճիշտ, նրա նախազժի մասին:

ՍԱՎԻՉ. Թե մեկի, և թե մյուսի:

ԳԱԼԻՆԱ. Խնդրեմ: Ընկեր Կաշիրինը մեր բարեկամն է: Կարող եք նրա ներկայությամբ վստահորեն խոսել:

ՄԱՎԻԶ. Հիանալի:

ԳԱԼԻՆԱ. Բայց, ներեցեք, ինչո՞ւ դուք միայն այժմ մտածեցիք զբաղվել այդ հարցով: Չէ՞ վոր բավական ժամանակ ես անցել: ՆԻԿԻՏԻՆ. Ալեքսեյ Վասիլյեվիչն արգեն զեկուցման ե պատրաստվում:

ՄԱՎԻԶ. Յես Մոսկվայում չեյի: Յես հեռավոր գործուղում եյի գնացել, ինչպես ասում են՝ ջհանդամի տակը: Վերադարձիս միանգամայն ապշեցի, յերբ իմացա, վոր Ալեքսեյ Վասիլյեվիչը վոչ միայն իր նախագծից ձեռք չի քաշել, այլ ընդհակառակը շարունակում ե պայքարել:

ԳԱԼԻՆԱ. Այո, այդպես ե: Նա հաստատ համոզված ե իր գաղափարի իրական լինելուն:

ՄԱՎԻԶ. Այդպես, այդպես: Բանը նրանումն ե, վոր ինձ խիստ անհանգստացնում ե Ալեքսեյ Վասիլյեվիչի հիվանդությունը: Այդ դրությամբ ուղեղի ե ջգերի լարումը կարող ե կործանիչ ազդեցություն ունենալ նրա առողջության վրա. կարճ ասած, խնդիրը վերաբերում ե մեզ համար հարգելի անձնավորության կյանքին:

ԳԱԼԻՆԱ. Այո...

ՄԱՎԻԶ. Այդ պայքարը միտք կունենա, յեթե այդ բոլորն արդարանար, բայց, դժբախտաբար, նրա նախագիծը գործնականում միանգամայն անիրագործելի յե:

ԿԱՇԻՐԻՆ. Դուք հաստատ համոզված եք դրանում:

ՄԱՎԻԶ. Հավատացած եմ: Հարուստ ֆանտազիա: Հիանալի թեմա յե գյուտի համար: Պետք ե կարծել, վոր հեռավոր ապագայում ամեն տեսակ ֆանտազիաներն, ինչպես Մարսի ե յերկրագնդի անմիջական կապը, կամ լուսնի վրա համբողջը՝ թերևս հնարավոր կդառնան, բայց ներկա մոմենտում այդ բոլորն իրական չեն:

ԿԱՇԻՐԻՆ. Ամբողջ դժբախտությունը նրանումն ե, վոր ընկեր Չազովը հաստատ համոզված ե, թվոր իր գաղափարն իրական ե հենց այժմ, մեր եպոխտում:

ԳԱԼԻՆԱ. Վորքան ինձ հայտնի յե, վոչ վոք ե վոչ մի անգամ նրան ֆանտազյոր չի համարել:

ՄԱՎԻԶ. Խնդիրը նրանումն ե, վոր ստեղծագործական պրոցեսն այնքան արբեցուցիչ ե, վոր նրա ազդեցությանը յենթարկվում են վոչ միայն պատանիները, այլև մենք, ծերունիներս:

ՆԻԿԻՏԻՆ. Դուք ի՞նչ եք առաջարկում:

ՄԱՎԻԶ. Միացյալ ուժերով սթափեցնել ծերունուն, պահպանել նրա կյանքը ե հանդիսա պարզեել, վորին նա, անկասկած, արժանի յե: Յես նախատեսում եմ ինչով ե վերջանալու այդ բոլորը, յեթե նա շարունակի իր պայքարը ե խոստովանում եմ, ինձ համար տարրերինակ ե, վոր դուք՝ նրա միակ աղջիկը՝ չեք զոում այդ:

ԳԱԼԻՆԱ. Բայց յես ի՞նչ կարող եմ անել, յերբ նա այդչափ զստահ ե ե այդչափ համառ:

ՄԱՎԻԶ. Այո, Ալեքսեյ Վասիլյեվիչի համառությանը յես ծանոթ եմ, բայց, դժբախտաբար, ամեն մի առավելություն բացասական ե դառնում, յեթե նա տեղին չի գործադրվում:

ԳԱԼԻՆԱ. Միակ բանը, վոր կարող եմ, այդ այն ե, վոր հետեմ նրան ե թույլ չտամ հոգնել:

ՄԱՎԻԶ. Բայց դա քիչ ե: Յեկեք ընդհանուր ուժերով աղղենք նրա վրա ե սթափեցնենք:

ԳԱԼԻՆԱ. Յեղյա, դու ի՞նչ ես կարծում:

ՆԻԿԻՏԻՆ. Ամբողջ հարցը նրանումն ե, արժե, թե՞ չարժե, վոր Ալեքսեյ Վասիլյեվիչն իրեն զոհի: Սակայն ի՞նչ կարող եմ ասել, քանի վոր յես ուսումնական չեմ...

ԳԱԼԻՆԱ. Ընկեր Պավել, իսկ դուք ի՞նչ կարծիքի յեք:

ԿԱՇԻՐԻՆ. Յես կուզեյի պրոֆեսորին մի քանի հարց տալ:

ՄԱՎԻԶ. Խնդրեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Չեք կարծում արդյոք, վոր յուրաքանչյուր նոր, համարձակ, արտասովոր միտք սկզբում կասկած ե հարուցում:

ՄԱՎԻԶ. Ինչ վերաբերում ե ինձ, յես, ինչպես իմ, նույնպես ե ուրիշների շատ համարձակ մտքեր եմ պաշտպանել ե իբազորձել, բայց Ալեքսեյ Վասիլյեվիչի միտքը ջղերի լարվածության ե հիվանդության արդյունք ե:

ԿԱՇԻՐԻՆ. Նշանակում ե, դուք հաստատ հավատացած եք, վոր նրա նախագիծը պիտանի չե: Անիրագործելի յե:

ՄԱՎԻԶ. Յես այդ մասին շատ անգամ եմ ասել:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ դեպքում դիմենք հիշողության: Դուք հիշում եք քաղաքացիական կոնֆլիկտի այն մոմենտը, յերբ ամեն կողմից թշնամիներով շրջապատված Խորհրդային Ռուսաստանը բաղկացած եր իննը քաղցած, վոջրտ նահանգներից, յերբ վոչ միայն հաց, այլև վոտքի փաթաթան չեր ճարվում: Մտածում

եյիք դուք այն ժամանակ, պրոֆեսոր, վոր այդ իննը նահանգը կդառնա աշխարհի մեկ վեցերորդ մասը:

ՍԱՎԻՉ. Ծիշոն ասած, չեյի մտածում: Սակայն դա այլ բան է:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ անհնար ձեզ ավելի մոտ բնագավառի: Դուք հիշում եք, ինչպես 20 թվին խորհուրդների 8-րդ համագումարում ներկայացվեց յերկրի ելեկտրոֆիկացման նախագիծը:

ՍԱՎԻՉ. Շատ լավ եմ հիշում:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ մասին յես անձամբ շատ սրախոսություններ եմ լսել՝ «տա աստված, վոր գոնե պրիմուս լինի», կամ՝ «կոմունիզմ՝ դա Սորհրդային իշխանությունն է, պլյուս պրիմուսը»: Այն ժամանակ դուք յենթադրում եյիք, վոր այդ նախագիծը յերբևե կիրադործվի:

ՍԱՎԻՉ. Այն ժամանակ յես չեյի յենթադրում:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ հինգ տարի առաջ, դուք հավատացած եյիք, վոր մենք կունենանք այն, ինչ ունենք այժմ:

ՍԱՎԻՉ. Կասկածում եյի վոչ միայն յես, այլև կոմունիստներից վոմանք:

ԿԱՇԻՐԻՆ. Մի խոսքով, յուրաքանչյուր անգամ նոր, համարձակ միտքը ձեր մեջ կասկած է առաջացնում: Դուցե, այս անգամ ևս ձեր կասկածն անհիմն է:

ՍԱՎԻՉ. Վոչ, այստեղ հարցը կասկածի մեջ չէ... Այն մտքերը, վորոնց մասին դուք ասացիք, մտածված, կշռադատված և մշակված են մեծ մարդկանց կողմից: Իսկ կոլեկտիվի տեսլածությունը յես և վոչ անհատի մտքի արդյունք է:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ դուք չեք կարծում, վոր մեծ մարդկանց կոլեկտիվ միտքը հեղափոխության ծնունդն է, մասսաների ստեղծագործությունը, նրանց ընդունակությունն այդ մտքերն իրագործելու: Այլապես այդ մտքերն ինչպես կարող եյին իրականանալ տեխնիկապես հետամնաց յերկրում:

ՍԱՎԻՉ. Կարծում եմ այդպես է:

ԿԱՇԻՐԻՆ. Յեզ, հետևաբար, պետք է յեզրակացնել, վոր անհատի, ընկեր Չադովի միտքը՝ դա նույնպես մեր եպոխայի ստեղծագործության արդյունքն է:

ՍԱՎԻՉ. (Շփոթված) Բայց այդ չի նշանակում, վոր յուրաքանչյուր միտք կամ նախագիծ իրական է: Չեզ, կարծեմ, հայտնի յե, վոր մեզանում շատ գյուտեր և նախագծեր են արխիվ նետվել:

ԿԱՇԻՐԻՆ. Միանգամայն ճիշտ է, բայց յես գիտեմ նաև, վոր քիչ չեն այն գյուտերն ու նախագծերը, վորոնք արխիվից դուրս են բերվել: Ամբողջ հարցը նրանումն է, վորպեսզի շտապ յեզրակացություններ չհանվի: Յես նկատի ունեմ ընկ. Չադովի նախագիծը:

ՍԱՎԻՉ. (Ուսերը բորսվելով) Յես ձեզ հասկացա: Դուք ուղղակի ուզում եք ասել, վոր յես ամբողջությամբ չեմ զգում մեր յերկրի զարկերակը և վոր իմ կասկածը նույնպես, յեթե վոչ գիտակցական, համենայն դեպս, յենթագիտակցական պահպանողականության արդյունք է: (Շփոթված ծայսալով) Հավանական է... Չնայած դուք վերջնականապես ինձ չհամոզեցիք, սակայն Աիքսեյ Վասիլյեվիչի սիրույն, պատրաստ եմ մեկ անգամ ևս մտածելու նրա նախագծի վրա: Ինձ միայն լրացուցիչ նյութ է հարկավոր: Ի՞նչպես ստանալ այդ:

ՆԻԿԻՏԻՆ. Բայց չե վոր Աիքսեյ Վասիլյեվիչը պատրաստվում է մոտ որերս գեկուցում տալու:

ՍԱՎԻՉ. Ա՛խ, ահա թե ինչ: Առավել լավ: (Վեր կենալով) Չեմ անհանգստացնի նրան: Հաղորդեցեք նրան իմ սրտագին վողջույնը և թող չբարկանա ու չկարծի, թե իմ քննադատության մեջ չար մտադրության թեկուզ ստվեր կա: Յտեսություն: (Հրածես Ե Եպիս յեվ գնում) Իսկ նյութերն ինձ ուղարկեցեք:

ՆԻԿԻՏԻՆ. Բայց դու լավ սեղմեցիր նրան: Նույնիսկ նախանձեցի: Այդ ինչու յես այդպես չեմ կարողանում:

ԳԱՂՆԱ. Նորից սկսեց թոնթորալ: Ա՛խ, տեր աստված, ինչ եմ անում... Իմ Գրիտափորը թեյի յե սպասում: (Անապարտեմով վազում է):

ՆԻԿԻՏԻՆ. (Ազահուրյամբ վերցնում է գլխի) Լավ, յես կհաղթեմ, կամ գլուխս կփչրեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Գո շտապողականությունն ինձ դուր չի գալիս: Միշտ ինչ վոր ծայրահեղությունների: Հանգստացիր, զբոսնիր, հետո կսկսենք:

ՆԻԿԻՏԻՆ. Չանձրալի յե մենակ թրև գալը:

ԿԱՇԻՐԻՆ. Մարմամարզությամբ զբաղվիր:

ՆԻԿԻՏԻՆ. Ավելի ձանձրալի յե:

ՉԱԴՈՎ. (Յերեվալով) Ինչի՞ մասին եք վիճում, յերիտասարգներ:

ԿԱՇԻՐԻՆ. Ֆիզիկուլտուրայի դերի մասին:

ՉԱԴՈՎ. (Հուզմած) Ծիշտ է: Հենց վոր իմ նախագիծն ընդունվի, յես ել Ֆրանսայի նախագահ Գուստրայի նման մարմա-

մարդու թյամբ կզբազմեմ և նրա նման կսկսեմ վազվզել զարա-
վանդում տրուսիկով: Իսկ մեզանում վազելու շատ տեղե՞ն կան:
Վերցնենք թեկուզ Սիբիրը: Այժմ այնտեղ արջեր կան, անհրա-
պույր ե, բայց ապագայում խոստանում եմ բոլոր այդ խոչըն-
դոտները վերացնել:

ԳԱԼԻՆԱ. (Յեռեվալով) Ահ, դու արդեն այստեղ ես, անհան-
գիսա յերազող:

ՉԱԴՈՎ. Վոչ քուսս ե տանում, վոչ ել պառկել եմ ուզում,
Գալոչկա:

ԳԱԼԻՆԱ. Թեյը խմիր և պառկիր: (Նսեցնում է յեվ բաժակ
մատուցում: Չադովը խմում է) Ֆեդյա, թեյ:

ՉԱԴՈՎ. Յերիտասարդ ընկերներ, դուք չեք գնահատում ձեր
տարիքը, չեք նկատում ձեր յերջանկությունը: Ֆեդյա, ինձ տուր
քո տարիքը և յես ամբողջ աշխարհը շուռ կտամ:

ՆԻԿԻՏԻՆ. Չեմ տա: Ինքս եմ ուզում այդ գործով զբաղվել:

ՉԱԴՈՎ. Չգիտեմ, գուցե այն պատճառով, վոր բավականու-
թյուն եմ ստանում իմ աշխատանքից, գուցե այն պատճառով,
վոր վստահ եմ զեկուցման հաջողությանը,—յես աներևակայելի
վերելք եմ զգում: Այդ ստեղծագործական ինքնազգացումն ամե-
նալավ նախապայմանն է այն բանի, վոր յես առողջ կլինեմ,
վոր յես, թերևս, կապրեմ մինչև այն որը, յերբ իմ նախագիծը
կսկսվի իրագործվի: Չի կարող պատահել, վոր դեպի կյանքն
ունեցած այսորինակ գորությունն իր բարերար ազդեցությունը
չունենա իմ որգանիզմի վրա: Յերջանկությունից, ասում են, չեն
մեռնում: Յեթե վիշտը կրծում է սիրտը, ինչո՞ւ ուրեմն մտքի
ուրախությունը չի կարող արգավանդել հիվանդ մարմինը: Ըն-
կեր Պավել, մենք դեռ քեզ հետ կվազվզենք Սիբիրում: Մենք դեռ
կմարտնչենք: Մենք դեռ... (Նրա ձախ ձեռքն սկսում է հանախա-
կի դողալ յեվ բաժակը դիպչել ափսոյի):

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ պատահեց... Չեռքդ ինչո՞ւ յե զոզում...

ՉԱԴՈՎ. (Կախազելով) Չ-չը-դի-գի-տ-անեմ (Սկսում է դողալ
նայելով ձախ վոսքի):

Բոլորն տեսնելով Վեր են քոչում: Մտեցնում են ՉԱԴՈՎին: Նրա ձախ ձեռքն
տեղափոխում է: Բաժակը փշրվում է, վոտքը ծալվում է: ՉԱԴՈՎն բնկնում է
նրանց քեկերի վրա:

ԳԱԼԻՆԱ. (Բացազանելով) Հայրիկ:

ՆԻԿԻՏԻՆ. Յերկրորդ հարվածը:

ԿԱՇԻՐԻՆ. Հանգիստ: Առանց պանիկայի: Տանե՞ք անկողին
(Կաշիրինը վերցնում է Չադովի ձեռքը, զարկեցակն է սուղում):
ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ... մեռավ... կենդանի՞ յե...

ՉԱԴՈՎԸ մի բան է փերփոթում:

ԿԱՇԻՐԻՆ. (Լսելով) Ի՞նչ:

ՉԱԴՈՎ. (Ուժ տալով) Չե-կ-կու-ցու-ում-ը-դե-կ-կու-ց-ցու-մը
ինչ-պես-կը-լի-նի (Աչեքը փակում է):

ԿԱՇԻՐԻՆ. Բժիշկ կանչեցե՞ք:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՅԵՐՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՁԱԴՈՎ. (Ձաղօվը խալաքը հագին ցուած ե հաւամնդամի սալա-
կի վրա: Նայում է քօրեզին) **Տաք քամին վեր ե բարձրանում**
դեպի հյուսիս: Յուրտ ողբ հագնում ե տաք գոլորշիներով: Ջեր-
մաստիճանը բարձրանում ե: Գետինը հալչում: Հողագործութեան
համար նոր հեռանկարներ են բացվում: (Պաուզա) Սատանան
տանի, կաթվածն ինչո՞ւ գեկուցումից հետո չբռնեց ինձ: Կուսակ-
ցությունն ընդառաջեց ինձ: Մամուլն սկսեց խոսել: Ինչ անմիտ
բան ե հենց ամին խեղդվելը: Հիմար բան ե: Անտանելի յե:
(Ջղայնորեն հեռւմ ե անթվը, պսսվում ե սենյակում):

Հարեվամ անյախում գտնվում եմ բծիչը, ՆիկիՏիՆԸ, ԳԱԼԻՆԱ: ՆիկիՏիՆԸ ՅԵԽ-
բել ե, զգգգված ե, չար յեվ վայրի:

ԳԱԼԻՆԱ. Կարճ ասած, դուք նրա առողջությունն այնքան
ել լավ չեք գտնում:

ԲԺԻՇԿ. Կատարյալ հանգստութեան պայմաններում Ալեքսեյ
Վասիլյեվիչը կարող կլիներ մի քանի տարի և նույնիսկ ավելի
ապրել, սակայն, ցավը նրանումն ե, վոր չկայացած զեկուցման
միտքը տանջում ե նրան:

ԳԱԼԻՆԱ. Իժբախտաբար այդ այդպես ե:

ԲԺԻՇԿ. Հետեաբար, հանգստութեան մասին խոսելն ավե-
լորդ ե:

ԳԱԼԻՆԱ. Իսկ ինչ կասեք, յի՞թե նրան հնարավորություն
արժի հանգես գալ, դուրս կորզել այդ փուշը նրա գլխից:

ԲԺԻՇԿ. Վոչ մի դեպքում: Ջեկուցումն ու մտքերի փոխանա-
կությունը կտանն յերեք ժամից վոչ պակաս, իսկ յես շատ եմ
կասկածում արդյոք զեկուցողը կկարողանա նույնիսկ կես ժամ

զիմանալ: Վոչ, այդ յերույթը կարող ե նրա համար ճակատագրա-
կան դաճնալ: Աշխատեցեք, յի՞թե կարող եք, ազդել նրա վրա,
ուշագրությունն այլ ուղղութեամբ գրավել:

ԳԱԼԻՆԱ. Անողուտ ե: (ՆիկիՏիՆԻԳ ցույց տալով) Դե, իսկ սրա
մասին:

ԲԺԻՇԿ. Անվազը մեկ տարով դադարեցնել պարապմունք-
ները, հակառակ դեպքում նա վերջնականապես կփաստի իր
ուղեգրը: (Հրածեօս ե տալիս) Վողջ լինեք: Յտեսություն: (Գնում ե):

ԳԱԼԻՆԱ. Լսեցի՞ր:

ՆիկիՏիՆ. Դրողը նրան տանի: Մի տարով պարապմունքները
զադարեցնել... Ուղածն ինչ ե:

ԳԱԼԻՆԱ. (Բորբօված) Ինքդ ես մեղավոր: Քեզ նախագգու-
շացնում եյինք, համոզում եյինք:

ՆիկիՏիՆ. Մի տարի կորցնել և մոռանալ այն, ինչ ձեռք եմ
բերել...

ԳԱԼԻՆԱ. Բայց հասկացիր, ուրիշ յեղ չկա: Հակառակ դեպքում
դու կկորցնես ավելին, գուցե և ամենը: Դու իզուր Պավելին
չլսեցիր:

ՆիկիՏիՆ. (Կասաղած) Պավել... Պավել... Ի՞նչ ես շարունակ
Պավելին աչքս խոթում: Նա հո ինձ համար որեքն չի:

ԳԱԼԻՆԱ. Նու, իսկ բժիշկը:

ՆիկիՏիՆ. Յես ինքս ինձ համար բժիշկ եմ և գիտեմ ինչ պետք
անել: Այս բոլորն անսովոր լինելու հետևանքով ե: Յերբ յես
առաջին անգամ սկսեցի ապրանքանավը բեռնել, սկզբում մեջքս
տնքում եր, վոսկորներս ցավում եյին, աչքերս մթնում եր, բայց
հետո վարժվեցի, բեռը մեջքիս՝ վազելով եյի աստիճանները
բարձրանում:

ԳԱԼԻՆԱ. (Հօգնած հառաչելով) Բայց այս դեպքում բանն ուրիշ
ե: Այստեղ ուղեղի հարցն ե:

ՆիկիՏիՆ. Հարկավոր ե թափ տալ այն, թարմացնել:

ԳԱԼԻՆԱ. Ինչպե՞ս: Ինչո՞վ:

ՆիկիՏիՆ. Դեղով:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ դեղով:

ՆիկիՏիՆ. Սեփական: Գնում եմ դեղատուն: (Դիխարկը ծածկում
ե յեվ դուրս գնում):

ԳԱԼԻՆԱ. Տարորինակ ե: Առաջ դեղի մասին լսել չեր կարող,
իսկ այժմ ինքն ե դեղատուն վազում: Շատ տարորինակ ե:

(Կանգնում ե ծանօ մտածմունքի մեջ: Դուռը ծեծում եմ: Ուզի յե գալիս): Մտեք: (Ուրախ) Ա՛, Պավել... Շատ լավ ե, վոր յեկար: Յես ինձ շատ տխուր եմ զգում բժշկի այցելութունից հետո:

ԿԱՇԻՐԻՆ. Բժիշկն ի՞նչ ասաց:

ԳԱԼԻՆԱ. Վոչ մի լավ բան — վոչ հորս, վոչ ել Ֆյոդորի մասին:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ առանց նրա ասելուն ել հայտնի յեր:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ անել:

ԿԱՇԻՐԻՆ. Կմտածենք:

ԳԱԼԻՆԱ. Դու ինչո՞ւ վերջերս սկսել ես ուշ-ուշ գալ:

ԿԱՇԻՐԻՆ. Ժամանակ չունեմ:

ԳԱԼԻՆԱ. Ծիշտ չե: Դու ուղղակի ձանձրանում ես մեզ մոտ: Հայրս հիվանդ ե, Ֆյոդորը մաղձոտ, յես... Նու, յես ի՞նչ նշանակութուն ունեմ քեզ համար... Ժամանակ եմ խլում, խախտում եմ քո աշխատանքի սխտեմը:

ԿԱՇԻՐԻՆ. Իմ սխտեմը քավականաչափ ճկուն ե, վորպեսզի ժամանակ գտնվի մեր հանդիպման համար, ձեր տուն գալու համար: Բանը դրանում չե: Ծիշտն ասած, Ֆյոդորն ինձ շփոթում ե: Վերջին ժամանակներս նա մի տեսակ փոխվել ե դեպի ինձ, նույնիսկ հրաժարվում ե իմ ոգնութունից:

ԳԱԼԻՆԱ. Տրամադրութունն ընկած ե և դիվահարում ե: Ուշադրութուն մի դարձրու: Մենք կարող ենք նրան կարեկցել, ոգիել, բայց պարտավոր չենք նրա հետ միասին տխրել:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ բոլորը ճիշտ ե: Սակայն տղան մեղք ե:

Դուռը ծեծում եմ: Մտնում ե ՍԱՎԻԶԸ:

ՍԱՎԻԶ. Բարև:

ԳԱԼԻՆԱ. Բարև:

ՍԱՎԻԶ. Ի՞նչպես ե մեր հիվանդը:

ԳԱԼԻՆԱ. Վատ ե, շատ վատ: Մարդկանց ներկայությամբ նա կատակում ե, զվարթանում, սակայն իրապես խիստ տանջվում ե: Չի կարողանում հաշտվել այն մտքի հետ, վոր կաթվածը խփեց զեկուցումից առաջ:

ՍԱՎԻԶ. Դե, իհարկե:

ԳԱԼԻՆԱ. Բայց ի՞նչ անել: Ինչպե՞ս ոգնել, յերբ բժշկութունն անդոր ե:

ՍԱՎԻԶ. Ահա հենց դրա համար ել յես յեկել եմ:

ԳԱԼԻՆԱ. Դուք դեմ չեք լինի, յի՞ժե ընկեր Կաշիրինը մասնակցի մեր խորհրդակցությանը:

ՍԱՎԻԶ. Խնդրեմ: Ուրախ կլինեմ: Յես հիշում եմ մեր վերջին զրույցը: Միանգամայն ուսանելի դասախոսություն՝ հին պրոֆեսորի համար:

ԿԱՇԻՐԻՆ. Ծաղրում եք:

ՍԱՎԻԶ. Ո՛ր, վոչ, ինչ եք ասում... Յես առհասարակ ուսուցար եմ համարում ձերունիները շփումը՝ յերիտասարդության հետ:

ԳԱԼԻՆԱ. Դրանից կարելի յե կարծել, վոր նախապժի մասին ընկեր Կաշիրինի յեզրակացութունը ճիշտ ե դուրս յեկել:

ՍԱՎԻԶ. Այ, հենց այդ մասին մենք հիմա կխոսենք: Յես այսպիսի առաջարկ եմ անում. — ուսումնասիրելով ձեզնից ստացած լրացուցիչ նյութերը, յես խորհրդի նիստ կհրավիրեմ, ինքս կգեկուցեմ, մտքերի փոխանակութուն կունենանք և այդ քուրորդ, մեր դրական վորոշման հետ միասին, կուղարկենք Ալեքսել Վասիլյեվիչին:

ԿԱՇԻՐԻՆ. Դուք խոսում եք դրական վորոշման մասին: Նշանակում ե, Սիբիրի կլիմայի փոփոխման իրեան ֆանտազիա չի:

ՍԱՎԻԶ. Դժբախտաբար յես մտում եմ իմ նախկին կարծիքին:

ԳԱԼԻՆԱ. Այ քեզ բան...

ՍԱՎԻԶ. Այս ժամանակամիջոցում յես մի քանի անգամ վերադարձա նախապժին, մանրամասնորեն ուսումնասիրեցի այն, բայց, յես հո չեմ կարող հասարակայնությունը շփոթության մեջ ձգել: Կուրոսիլոն նվաճելու գաղափարը չափազանց հրապուրիչ ե: Գիտական խորհրդի կարծիքը հեղինակավոր ե, և յեթե մենք կեղծենք և դրական վորոշում ընդունենք, անմիջապես ենտուգիաստներ դուրս կգան, նախահաշիվներ կնեղկայացնեն, իսկ արդյունքը կլինի միայն եքսպերիմենտ, վորն ի վերջո կլինի վատնում: Ամբողջ աշխարհում խայտառակ կլինենք: ԿԱՇԻՐԻՆ. Նշանակում ե ձեր առաջարկութունն ուղղակի ֆիկցիա յե: Բուտաֆոբիա...

ՍԱՎԻԶ. Այո, բուտաֆոբիա, խաբեյություն, կեղծիք, բայց սրբազան կեղծիք, հանուն մարդկային կյանքի փրկության:

ԳԱԼԻՆԱ. Յես ձեզ հետ միանգամայն համաձայն եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Դժբախտաբար յես այդ գործում ազետ եմ, բայց այնուամենայնիվ ավստսում եմ, վոր ընկեր Չաղովը հնարավորություն չունի անձամբ ղեկուցել: Բոլորովին այլ տպավորու-

Թյունն է թողնում, յերբ հեղինակն ինքն է պաշտպանում իբր գաղափարը, նոր մտքեր է պարզաբանում, համոզում է:

ՍԱՎԻՉ. Այդ բոլորը ճիշտ է, բայց հազիվ թե ինձ համոզի: Յես բավականաչափ զբաղեցնում եմ Հյուսիսի դեպքերին հետևելու համար: Ճարակա՛ն գեներալներն ու նահանգապետները, Հյուսիսն իր թշվառ դրուժյունից դուրս բերելու առաջարկին հեղնորեն պատասխանում եյին, վոր Սիբիրում Հոլֆշտրոմներ չեն լինում: Վեր ապուշը կուզենա բեռնի բերանն ընկնել: Ճարակա՛ն այդ պոմպոզություններին յես ընկերանալ չեմ կարող: Յես հիանալի հասկանում եմ, թե ինչ է իրենից ներկայացնում համամիութենական սղոցարանը, վորն իր տարածությամբ հավասար է Շվեդիայի, Նորվեգիայի և Ֆինլյանդիայի անտառներին՝ միասին վերցրած: Հիանալի ծանոթ եմ Պեչորայի հարստություններին: Գիտեմ ինչ են խոստանում մեզ Արկտիկի կղզիները: Այդ բոլորն ինձ համար հասկանալի չէ: Կարճ ասած, հակառակ ցարակա՛ն պոմպոզությունների կարծիքի, բեռնի անպտուղ թվացող հողը վարվում է: Այդպիսի չափերտավոր Հոլֆշտրոմի յես հավատում եմ, բայց բառացի հասկացողությամբ, առանց չափերտների Հոլֆշտրոմի՝ չեմ հավատում:

ԿԱՇԻՐԻՆ. Ափսոս:

ՍԱՎԻՉ. Ի՞նչ արած:

ԿԱՇԻՐԻՆ. Ափսոս, վոր Ալեքսեյ Վասիլյեվիչը չի կարող հանդես գալ իր զեկուցումով:

ԳԱԼԻՆԱ. Դա անմտությունն է:

ԿԱՇԻՐԻՆ. Յերևակայում եմ, թե ինչպես կծաղկի Հյուսիսը, յեթե Չալովը վերացնի այդ չափերտները:

ԳԱԼԻՆԱ. Հորս՝ զեկուցումով հանդես գալու մասին խոսք անգամ չի կարող լինել: Դա անմտությունն է: Անտարակույս մահ: Չեր առաջարկը, Սերգեյ Միխայիլովիչ, միակ միջոցն է:

ՍԱՎԻՉ. Յե՛վ այդպես, վճռված է: Ալեքսեյ Վասիլյեվիչին հետ ձեր վարած բանակցության արդյունքի մասին դուք ինձ կհայտնեք: Չափազանց ուրախ կլինեյի, յեթե իմ սուտը կարողանար թեթևացնել նրա տանջանքները:

ԳԱԼԻՆԱ. Շնորհակալություն, Սերգեյ Միխայիլովիչ ձեր ջերմ վերաբերմունքի համար: (Սեղմում է ձեռքը):

ՍԱՎԻՉ. Հաջողությունն էմ ցանկանում: Յոստություն: (Գրեմում է):

ԳԱԼԻՆԱ. Պավել, այժմ ամբողջ հույսս քեզ վրա յե: Դու վատ ճառախոս չես, աշխատիր մի լավ ձոռմաբանել հանուն բարի գործի, իսկ յես կաջակցեմ:

ԿԱՇԻՐԻՆ. (Սուս) Հազիվ թե այդ անհրաժեշտ լինի: Տրամադրությունն չկա, մեկ էլ, այդպիսի «սրբազան կեղծիք» հետ սկզբունքորեն համաձայն չեմ:

ԳԱԼԻՆԱ. Այդ յես անսխալապես քթիցդ իմացա:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ մասին յես ունեմ իմ կարծիքը: Իժպար թե դու համաձայնվես դրա հետ:

ԳԱԼԻՆԱ. Պատրաստ եմ լսել:

ԿԱՇԻՐԻՆ. Դու հիշում ես մեռնող կոմիսարի պատմությունը, վորին յես ազատեցի ավելորդ տանջանքներից:

ԳԱԼԻՆԱ. Հիշում եմ, բայց դա ի՞նչ ընդհանուր կապ ունի հորս հետ:

ԿԱՇԻՐԻՆ. Հայրդ նույնպես տանջվում է, ինչպես կոմիսարն էր տանջվում, միայն բարոյապես:

ԳԱԼԻՆԱ. Դրանով ի՞նչ ես ուզում ասել: Արդյոք տրամադիր չե՞ս նրան նույնպես...

ԿԱՇԻՐԻՆ. Դեռևս խելքս վրաս է, վորպեսզի կարողանում պատմածս դեպքի և ներկա մոմենտի պայմաններն ու ժամանակը միմյանցից տարբերել: Յես միայն ցանկանում եմ խորհուրդ տալ հորդ, վոր նա հանդես գա իր զեկուցումով:

ԿԱՇԻՐԻՆ. Բայց դա նշանակում է մարդուն դեպի ինքնասպանությունն մղել:

ԿԱՇԻՐԻՆ. Նա վոչինչ չի կորցնի:

ԳԱԼԻՆԱ. Յես իրավացի եյի: Դու դաժան մարդ ես:

ԿԱՇԻՐԻՆ. Հայտնի չէ, թե մեզանից ով է դաժան. դու, վոր անմիտ տանջանք ես ցանկանում հորդ, թե յես, վոր ցանկանում եմ նրան ազատել դրանից:

ԳԱԼԻՆԱ. Բայց ինչու: Ո՞ւմ է պետք այդ գործողությունը:

ԿԱՇԻՐԻՆ. Տարորինակ է: Յես համոզված եմ, վոր նրա նախադիժը իրական է: Վորպես հեղափոխական, վորպես բուլշեիկ, նա պետք է միայն այդպես վարվի:

ԳԱԼԻՆԱ. Իսկ յես համոզված եմ, վոր դրանից բան դուրս չի գա: Չգազրդությունը նրան կապանի հենց զեկուցման սկզբին: Վոչ յերկբին, վոչ էլ իրեն դրանից ոգուտ չկա: Կատացվի միայն զեկեցիկ, բայց անմիտ ժեստ, վորը կապանի իմ ամենամտեղիկ և

սիրելի մարդուն: Չե՞ վոր նա ինձ համար յեղել է վոչ միայն հայր, այլև մայր, վորեց յես զրկվել եմ մանուկ հասակում: Ինչպիսի ուժ է տանջանք ե արժեցել նրա համար ընդհատակյա պայմաններում ինձ դաստիարակելը:

ԿԱՇԻՐԻՆ. Բայց այդ չի խանգարի նրան հանուն զորձի ոխի յենթարկել իր և քո կյանքը: Ինչո՞ւ չես ցանկանում նրա որինակին հետևել:

ԳԱԼԻՆԱ. Վարովհեստե այն ժամանակ նրա ոխի իմաստ ունեք, իսկ այժմ...

ԿԱՇԻՐԻՆ. (Ընդհատելով) Նա վոչինչ չի կորցնի՝ բացի տանջանքից, վորը միայն արագացնում է վախճանը:

ԳԱԼԻՆԱ. Յես կլարեմ վորչ ուժերս, վորպեսզի այդ տանջանքները չլինեն, մանավանդ, վոր կա Սավիչի առաջարկը:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ յեթե Չաղովը նրան չհավատն:

ԳԱԼԻՆԱ. Այն ժամանակ... այն ժամանակ... նա կընտելանա այն մտքին... և ընդհանրապես կտեսնենք:

ԿԱՇԻՐԻՆ. Թանկագին ժամանակի կորուստ:

ԳԱԼԻՆԱ. Յե՞վ այդպես, դու չես ուզում ոգնել ինձ հորս համոզելու՞ Սավիչի առաջարկն ընդունելու:

ԿԱՇԻՐԻՆ. Չեմ կարող:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում, յեթե դու ինձ գեթ մի քիչ, գեթ մի փոքր հարգում ես...

ԿԱՇԻՐԻՆ. Յես քեզ շատ եմ հարգում:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում խոսք տուր, վոր դու հորս չես հայտնի այդ միտքը:

ԿԱՇԻՐԻՆ. Դժբախտաբար այդպիսի խոսք տալ չեմ կարող: Քանի նա կենդանի յե, պետք է աշխատել փրկել նրա պրոնկտը:

ԳԱԼԻՆԱ. (Վախեցած) Այդ դեպքում յես քեզ հետ... Այդ դեպքում յես... քեզ... Վոչ, դու այդ չես անի...

ԿԱՇԻՐԻՆ. Կանեմ:

ԳԱԼԻՆԱ. Նա իմ ամենամոտիկ մարդն է... իմ հայրն է:

ԿԱՇԻՐԻՆ. Ինձ համար նա կուսակցութեան անդամ է: (Վեր է կենում):

ԳԱԼԻՆԱ. (ձառնապահք փակելով) Թույլ չեմ տա: Նո՞քնած է:

ԿԱՇԻՐԻՆ. Լավ, յես հետո կանցնեմ:

ԳԱԼԻՆԱ. Յես ատում եմ քեզ: Դու գազան ես: Մենք բաժանվում ենք վորպես թշնամիներ:

ԿԱՇԻՐԻՆ. Իզուր: Յես մնում եմ քո ամենալավ բարեկամը:

ԳԱԼԻՆԱ. Յես քեզ տեսնել չեմ ցանկանում:

ԿԱՇԻՐԻՆ. Շատ ցավալի յե, բայց յես պետք է տեսնեմ ընկեր Չաղովին:

ԳԱԼԻՆԱ. Հեռացիր, յես հոգնել եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Գնում եմ, բայց շուտով կվերադառնամ (Գնում է):

ԳԱԼԻՆԱ. (Հեսեվից) Ի՞նչ մարդ է: Ի՞նչ տարրինակ մարդ: Բայց, թերևս, նա իրավացի յե: Պարզ և լուրջ է նայում իրերի վրա, իսկ յես նրա աչքում անպետք, Չղային տիկին եմ: Իսկապես, չե՞ վոր նախագիծը յերկրին հարկավոր է: Ի՞նչ անեմ: Չոհել թանկագին հորս... բայց բժիշկները հավատացնում են, վոր դա անմտութուն և հիմարութուն է, եքսպերիմենտ է, ավելորդ գոհարեութուն: Վոչ: Թող Պավելն ինքն իր վրա եքսպերիմենտներ կատարի, իսկ հորս մոտ յես նրան չեմ թողնի: Սակայն ի՞նչ պես անել դա: Ի՞նչպես արգելել: (Բիչ մտածելով) Գոտ: Հաստատ միջոց (Թախծոս) Բայց չե՞ վոր այդ դեպքում Պավելը կդադարի մեզ այցելել: Ի՞նչ անել: (Հառաչելով): Թող: Հայրս ինձ համար ավելի թանգ է (Հեռանում է):

ՆիկիՏին. — (Մտնում է, նայում է չորս կողմը) Ահա և դեղք: (Շեքը սեղանին է դնում) Անմիջապես ուղեղս կթարմացնի: (Բաժակը լեցնում է յե՞վ խմում) Հիանալի դեղ է: (Խմում է յերկրորդ բաժակը) Լավ է: (Մտածելով) Մի քանի կաթիլ ևս չընդունեմ: (Ուզում է յերրորդ բաժակը լեցնել, բայց փայտեքի ձայն լսելով, շեքը բազցնում է սեղանի տակ):

ԳԱԼԻՆԱ. Դեղը բերեցի՞ր:

ՆիկիՏին. Բերեցի:

ԳԱԼԻՆԱ. Խմեցի՞ր:

ՆիկիՏին. Խմեցի:

ԳԱԼԻՆԱ. (Յերկար նայելով ՆիկիՏինի աչքերին) Տարրեր նակ է:

ՆիկիՏին. Ի՞նչն է տարրինակ:

ԳԱԼԻՆԱ. Աչքերդ փայլում են: Յե՞վ սպիրտի հոտ է գալիս:

ՆիկիՏին. Դեղը սպիրտով է պատրաստվում:

ԳԱԼԻՆԱ. Այդպես... այդպես... (Հայացնով վորոհում է չորս կողմը):

ՆիկիՏին. Ի՞նչ է պատահել: Ի՞նչ ես չոգել կոկորդիս, ի՞նչ ես վորոհում:

ԳԱԼԻՆԱ. Իսկ սա թնչ ե: (Շիօբ ցույց օալով):

ՆԻԿԻՏԻՆ. Նարզան:

ԳԱԼԻՆԱ. Դու նորից սկսել ես խմել: Սատանան գիտե, թե դա թնչ ե: Ինձ ձանրացրել ե դա: Յես պարտավոր չեմ քո վայրենու-
թյունները տանել:

ՆԻԿԻՏԻՆ. Գալինա, յեթե դու զգայիր իմ վիշտը, կհասկանայիր:

ԳԱԼԻՆԱ. Հասկանում եմ, բայց յես գիտեմ նաև, վոր դու խիստ համառ եյիր, յերբ հակառակում եյիր սովորելուն, և նույնքան համառ ես՝ յերբ սկսել ես սովորել: Ահա հայրս, իրոք վուզբերգա-
կան գրության մեջ ե: Յես պատրաստ եմ իմ ամբողջ փոքրիկ կյանքը տալու, միայն թե յերկարի նրա կյանքը: Իսկ դու ատող է տղա յես և տառապում ես քո սեփական անզուսպ բնավորություն-
նից, վորից տանջվում եմ և յես:

ՆԻԿԻՏԻՆ. Իսկ քեզ ով ե ստիպում տանջվես իմ պատճառով:

ԳԱԼԻՆԱ. Միթե դու կարծում ես, վոր հեշտ ե և հուճելի ապրել մի մարդու հետ, վորը միշտ մոռայ ե, անհամբույր, ճնշիչ: Յերբեմն ինձ թվում ե, վոր իմ գլխի վերեւ վոչ թե առաստաղ ե, այլ սև ամպ: Յես այդ չեմ ցանկանում: Ինչո՞ւ: Ամուսնությունն ինձ համար իղիա չե, նպատակ չե և յես չեմ ուզում, վոր ամուս-
նությունն անդրադառնա իմ աշխատանքի վրա: Զգաստացիր:

ՆԻԿԻՏԻՆ. Այդ նշանակում եսանրվել մաքրվել և Պավելի խորհրդի համաձայն՝ ֆիզիկոլոգիայով զբաղվել, իսկ ըժշկի խորհրդով՝ մի տարով դադարեցնել ուսումը: Դա նշանակում ե ժպիտը շրթունքներին նստեմ անցաթղթերի սեղանի մոտ: Իսկ կյանքն այդ ժամանակամիջոցում ել ավելի առաջ կանցնի, իսկ յես այդ ժամանակամիջոցում ել ավելի յետ կմնամ: Վոչ: Յես պարապմունքը չեմ ընդհատի: Կհարկադրեմ ինձ, կլարեմ ըտլոր ուժերս, մինչև գիտակցությունս կորցնելը:

ԳԱԼԻՆԱ. Իսկ յեթե...

ՆԻԿԻՏԻՆ. Նո՛ւ, ինչ արած... մեռնելու յենք: Ի՞նչ ենք կորցնում: Վոչ հասարակական կյանք, վոչ անհատական: (Տեսում կախ ե գցում գուլար: Կառն պառլզա):

ԳԱԼԻՆԱ. (Անզգնակամ) Փեղյա, սիրելիս, ինչո՞վ կարող եմ ուզնել քեզ:

ՆԻԿԻՏԻՆ. (Իլուխը բարձրացնում ե, վերցնելով Գալինայի ձեռքը) Գալոչկա, ասա ինձ ճիշտը, առանց թագցնելու, Պավելը վորպես տղամարդ դժուր ե գալիս քեզ:

ԳԱԼԻՆԱ. (Շփոթված) Դուր ե դալիս:

ՆԻԿԻՏԻՆ. (Ձեռք բաց քողմելով) Այդպես:

ԳԱԼԻՆԱ. Բայց վորպես մարդ յես նրան ատում եմ:

ՆԻԿԻՏԻՆԸ զարմացած բարձրացնում ե գուլար:

ԳԱԼԻՆԱ. Վորպես ապացույց, դադարեցնում եմ իմ ծանոթու-
թյունը նրա հետ: (Հուզմունքը զսպելով): Յես դեմ չեյի լինի, յեթե նա բուրբոկին դադարեմ մեր տուն հաճախել:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչո՞ւ:

ԳԱԼԻՆԱ. Վորովհետև յես նրա մասին մնում եմ նույն ալի կարծիքին, ինչ կարծիքի եյի ծանոթանալու ոքը (Արագ օուռ ե գալիս յեվ եռանում):

ՆԻԿԻՏԻՆ. (Հետեվից) Ձեա հասկանում: (Մտածկոց) Այստեղ ինչ վոր բան կա... (Իծվառաբլամբ ուժադուրբյունը կենսոնացնում ե գրքի վրա):

ԳԱԼԻՆԱՆ կանգնում ե սայլակի մոտ յեվ հայացքը հառում հորք:

ՉԱԴՈՎ. (Աչքեր բացալով) Դժուր յես, Գալոչկա:

ԳԱԼԻՆԱ. Յես եմ, հայրիկ: Ձանձրանում ես:

ՉԱԴՈՎ. Վոչ, այնքան ել չե... Գլուխս կանոնավոր վիճակում ե, միտքս պարզ, իսկ դա մի բան նշանակում ե:

ԳԱԼԻՆԱ. Իսկ յես հաճելի նորություն պիտի հայտնեմ քեզ:

ՉԱԴՈՎ. (Հեզմունքով) Հաճելի նորությունները հաճելի յե լսել:

ԳԱԼԻՆԱ. Սավիչն եր յեկել: Շատ յիտթված եր: Լրացուցիչ նյութերն ստիպել ե նրան խորը մտածել քո նախագծի վրա և ըստ եյության գնահատել այն: Կարճ ատած, նա խնդրում ե, վոր թույլ տաս իրեն, քո փոխարեն հանդես գալու գիտական խորհրդում, խոստանալով պաշտպանել նախագիծը նույն վճռակա-
նությամբ, ինչպես դու կպաշտպանեիր: Նիստի արդյունքի ճիշտ սղագիրը կուղարկի քեզ:

ՉԱԴՈՎ. (Քմժիմաղով) Այդպես, այդպես... Գալոչկա, հիշում ես, յերբ դու փոքրիկ եյիր և համառություն եյիր անում, յես քեզ համար հետաքրքիր հեքյաթներ եյի հորինում և...

ԳԱԼԻՆԱ. Իրանով թնչ ես ուզում ասել:

ՉԱԴՈՎ. Այն, վոր իմ տարիքի յերեխաները հեքյաթներ չեն հավատում:

ԳԱԼԻՆԱ. Հայրիկ, ինչպէս չես ամաչում: Ազնիւ խոսքով յերդ-
ժում եմ, վոր Սաղիչը յեկել եր:

ՉԱԴՈՎ. Ճիշտ ե, վոր յեկել եր, հավատում եմ, վոր այդ հե-
քյաթի հեղինակութունը պատկանում ե նրան, իսկ ցուցա-
դրումը՝ քեզ:

ԳԱԼԻՆԱ. (Կրկին վերաւորված զգայով իբն) Յես խորապես
վերաժողոված եմ:

ՉԱԴՈՎ. Ինչքե՞ն: Այն պատճառով, վոր չհաջողվեց ինձ խօսել:
Իսկ յես անհա, չեմ նեղանում: Ընդհակառակը, յես շատ զգացւած
եմ ձեր դավադրութունից:

ԳԱԼԻՆԱ. Բայց ինչն ե քեզ իրավունք տալիս կասկածելու իմ
անկեղծութեանը:

ՉԱԴՈՎ. Բո աչքերը, իմ սիրելի աղջիկս, քո աչքերը: Չե՞ վոր
յես բավականաչափ ուսումնասիրել եմ նրանց:

ԳԱԼԻՆԱ. Յես քեզ հավատացնում եմ...

ՉԱԴՈՎ. Իդուր ես հավատացնում: Յեթե յես հնարավոր
ություն ունենայի՝ հանդես գալ, յես նիստին մասնակցելու
կհրավիրելի կուսակցական այն ընկերներին, վորոնք իրենց գործ-
նական բնազդով ավելի լավ կհասկանային ինձ, քան իմ գիտա-
կան ընկերները: Նրանց կարծիքներն իսկապես կշարժեյին գիտա-
կան խորհրդի ուղեղը: Յես ամեն ջանք գործ կէնեյի Գալիլեյի
նման ապացուցելու, վոր Կուրոսիվոն այնուամենայնիվ կվառնա
խորհրդային:

ԳԱԼԻՆԱ. Բավական ե: Դառնանք ուրիշ նյութի:

ՉԱԴՈՎ. Դառնանք: Ասա ինձ, Գալիլեյ, դու յերբեք մտածե՞լ
ես մահվան մասին:

ԳԱԼԻՆԱ. Խոսք չունեմ, շատ ուրախ նյութ ե:

ՉԱԴՈՎ. Թե՞ այդ նյութով զբաղվում են ինձ նման պարսպ
մարդիկ:

ԳԱԼԻՆԱ. (Բարկացած) Յես նման հիմարութուններով զբաղ-
վելու ժամանակ չունեմ:

ՉԱԴՈՎ. Իսկ յես, անհա, կրեմատորիայի շեմքին՝ զբաղվում եմ
այդ հարցով: Յեթե ինձ տանջեր այն գիտակցութունը, վոր ինձ
հետ միասին մահանալու յես նաև իմ նախագիծը, յես միանգա-
մայն կհամակերպելի հաշտանգամի վիճակին: Քանի զեռ միտքս
պայծառ ե և կարող եմ հետեւել աշխարհի անց ու դարձին, յես
չեմ ցանկանում մեռնել:

ԳԱԼԻՆԱ. (ձչում ե) Տեսա՞ք...

ՉԱԴՈՎ. Ի՞նչ ե նշանակում այդ անորոշ «տեսա՞ք»...

ԳԱԼԻՆԱ. Դո վերաբերում ե Կաշիրինին: Նրան թվում ե,
վոր դու այլ կերպ ես նայում կյանքին:

ՉԱԴՈՎ. Ավելին կասեմ. յեթե նույնիսկ կաթվածից միայն
մի աչքս առողջ մնա, վորպեսզի աշխարհը տեսնեմ, և միայն մի
ականջս՝ նրա հնչյունները լսելու, նույնիսկ այդ դեպքում յես
չեյի հրաժարվի կյանքից:

ԳԱԼԻՆԱ. Բռնվո, բռնվո: Այ, դրա համար յես քեզ սիրում
եմ: Այ, դա յես հասկանում եմ: Վոչինչ, ծերուկ, վոչինչ, մենք
դեռ կապրենք: Այդ մասին յես յերաշխարհում եմ:

ՉԱԴՈՎ. (Ընկնված ձայնով) Իսկ նախագիծն ինչպե՞ս:

ԳԱԼԻՆԱ. Չեք քաշիք քո այդ նախագիծից: Խորհրդային իշ-
խանութունն առանց նրա յել կապրի: Ե՛սպես ել համառ ծերուկ:

ՉԱԴՈՎ. Խնդրում եմ, ինձ անկողին դրիր: Չանձրացա բիկ-
շայի դերում լինելուց և ինքս ինձ ման ածելուց:

ԳԱԼԻՆԱ. Ֆիդյա, յեկ այստեղ: (Ֆեդյան մտնում ե) Ոգնիր
հայրիկին անկողին պառկեցնելու:

Զգուշարքամբ փոխադրում եմ անկողնու վրա: ՆիկիՏինն աշխատելով ՉԱԴՈՎին
չեայել արագ գնում ե իր սենյակը:

ՉԱԴՈՎ. Ի՞նչ ե պատահել նրան: Ինչո՞ւ յես այդպես մռայլ: Յեվ
լաքի հոտ ե գալիս:

ԳԱԼԻՆԱ. Տխրում ե, անգիր ե անում, նույն պատմութունն
ե...

ՉԱԴՈՎ. Իդուր: Վատ ե սեփական բնավորութեան գործ լի-
նելը: Վատ ե: Յեթե ճիշտն ասենք, յես իրավունք չունեմ գան-
գաովելու, յեթե անգամ վաղն իսկ ինձ կաթված խփի: Իմ ընկեր-
ներից քանի քանիսը կոհիցին աքսորում և բանտերում՝ հեղա-
փոխութեան մասին յերազելով, իսկ յես յերջանկութուն ունեցա
տաննորս տարի ապրել և տեսնել հեղափոխութունը, բայց այ-
նուամենայնիվ, անշնորհակալ եմ, ագահ եմ, դեռ ելի ուզում եմ
ապրել...

ԳԱԼԻՆԱ. Միայն մի բորբոքվիր: Հանգիստ: Անցնենք ուրիշ
նյութի:

ՉԱԴՈՎ. Դարձյալ ուրիշ նյութի... Դու շատ խիստ զբաքննիչ
ես: Նյութն ինքդ ընտրիր:

ԳԱԼԻՆԱ. Լա՛վ: Յեո, ահա ինչ նյութ եմ ընտրում: Յես ուզում եմ խնդրել քեզ, վոր Կաշիբինին չընդունես:

ՉԱԴՈՎ. Ինչո՞ւ:

ԳԱԼԻՆԱ. (Հուզվում էր զայելով) Վորովհետև... Հետո մանրամասն կպատմեմ:

ՉԱԴՈՎ. Հըմմ... Այնքան ել հարմար չե: Յես պատճառ չունեմ, ընդհակառակը, յես միշտ ուրախ եմ նրան տեսնելու:

ԳԱԼԻՆԱ. Դա միայն ինձ ե վերաբերում:

ՉԱԴՈՎ. Անձամբ քեզ: Հըմ... Հասկանում եմ... Հասկանում եմ: Այդ դեպքում արդեն խոսք լինել չի կարող: Հպատակվում եմ: Բայց ի՞նչպես արգելել: Հո չի կարելի ասել — հաճեցեք հեռանալ այստեղից:

ԳԱԼԻՆԱ. Գրիբ նրան, մի բան հորինիր, թե քեզ վատ ես զգում ե վոչ վոքի չես ընդունում... Մի խոսքով, մի բան հնարիր: Ձե վոր դու հնարիմաց մարդ ես:

ՉԱԴՈՎ. Լա՛վ: Մի բան կհորինենք:

ԳԱԼԻՆԱ. Այդ տոմսը ինքս կտամ նրան... կուղարկեմ:

ՉԱԴՈՎ. Ավելի լավ չե՞ դռանը փակցնել, ինչպես արժում ե բյուրոյի քարտեզի հիմնարկում:

ԳԱԼԻՆԱ. Չեմ առարկում:

ՉԱԴՈՎ. Հիանալի: Թուղթ տուր:

ԳԱԼԻՆԱ. (Անապատումով տալիս ե քանակ, բուլք) Միայն շուտ գրիր, թե չե հանկարծ կարող ե գալ:

ՉԱԴՈՎ. Ի՞նչ մի այնպիսի բյուրոյի քարտեզի բան գրեմ: «Առանց զեկուցման ներս չմտնել»... Վոչ, դա հնացած ե «Վաթիլը սաստիկ հարբած ե: Ընդունելու թյուն չկա»:

ԳԱԼԻՆԱ. (Անհամբեր) Առանց կատակի: Գրիր, գրիր:

ՉԱԴՈՎ. Գրում ե:

ՆԻԿԻՏԻՆ. (Իր սեղանի վրա) Բան դուրս չի գալիս: Տասն անգամ նույն տողը կարդում եմ, բայց վոչինչ չի մնում հիշողությանս մեջ: (Սեսում ե գրիբ) Փանտախտ... (Մի ումպով խմում ե ռե մեջ մնացած ողիմ):

Առանց դուրս ծեծելու մտնում ե ՊԱՎԵԼԷ:

ԿԱՇԻՐԻՆ. Բարե, Ֆյոդոր:

ՆԻԿԻՏԻՆ. (Մռայլ) Բարե:

ԿԱՇԻՐԻՆ. (Նկատելով դադարի շեղ) Դու այս ինչ ես անում: ՆԻԿԻՏԻՆ. Դեղ եմ ընդունում:

ԿԱՇԻՐԻՆ. Թող հիմարություններդ:

ՆԻԿԻՏԻՆ. Առանց խնամակալի յուր կգնամ:

ԿԱՇԻՐԻՆ. Յես քեզ համար խնամակալ չեմ, այլ ընկեր ե բարեկամ:

ՆԻԿԻՏԻՆ. Թող ասոված ազատի մեզ այդպիսի բարեկամներից:

ԿԱՇԻՐԻՆ. Դու հարբած ես:

ՆԻԿԻՏԻՆ. Այն, ինչ հարբածի լեզվին ե, նույնը լուրջ մարդու գլխու մե:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ միշտ: Հարբածը հիմարի նման հաճախ հիմարություններ ե դուրս տալիս:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչ ես գլխիս շարունակ բարոյական քարոզներ կարդում: Դաստիարակ հո չեմ: Ուրիշի մտքերը հակառակել, լեւրք մարդու տեղ ես դրել քեզ: Գրողի ծնցը գնա:

ՉԱԴՈՎ. Ի՞նչ ազմուկ ե այնտեղ: Ի՞նչ ե պատահել: Իմացիր:

ԳԱԼԻՆԱ. (Վազելով) Ի՞նչ ե պատահել:

ԿԱՇԻՐԻՆ. Դիվանարել ե մարդը:

ՆԻԿԻՏԻՆ. (Իլիարկալ ծածկելով) Կորեք բուրդ: (Գնում ե զեպի դուրս):

ԿԱՇԻՐԻՆ. Ո՛ւր:

ԳԱԼԻՆԱ. Այդ դուրս թյուն:

ՆԻԿԻՏԻՆ. Խմելու յեմ գնում:

ԿԱՇԻՐԻՆ. (Ճանապարհը փակելով) Վոչ մի տեղ չես գնա:

ՆԻԿԻՏԻՆ. Իսկ քո ինչ գործն ե:

ԿԱՇԻՐԻՆ. Վարկաբեկելով քեզ, դու վարկաբեկում ես կուսակցությանը:

ԳԱԼԻՆԱ. Թող գնա:

ՆԻԿԻՏԻՆ. Թող գնա: Հենց այդ ել քեզ հարկավոր ե... Նքա հետ մենակ մնալ (Կատրիսին) Թող:

ԿԱՇԻՐԻՆ. Չեմ թողնի:

ՆԻԿԻՏԻՆ. Թող:

ԿԱՇԻՐԻՆ. Ֆյոդոր, հանգիստ: Յերբ ուշքի գաս, կամաչես:

ՆԻԿԻՏԻՆ. Թող:

ՉԱԴՈՎ. Չավակներս... Չավակներս... Չեն լսում:

ԳԱԼԻՆԱ. Բաց թող նրան: Հիվանդ կա այնտեղ:

ՉԱԴՈՎ. Ի՞նչ է պատահել այնտեղ: (Ուժ է գործ դնում վեր կենալու):

ՆԻԿԻՏԻՆ. Ե՛խ: (Հարձակվում է Կաշիրինի վրա):

Կալում են: ԿԱՇԻՐԻՆԸ ՆԻԿԻՏԻՆԻՆ Ձեռնում է բազմոցի վրա:

ԳԱԼԻՆԱ. Դադարեցե՛ք: Ի՞նչ էք անում: Պահել:

ԿԱՇԱՐԻՆ. (Նիկիտինին բազմոցին սեղմելով) Հանգիստ: Կհապեմ:

ՆԻԿԻՏԻՆ. (Դիմադրելով) Բաց թող, կսպանեմ:

ՉԱԴՈՎԸ դժվարությամբ բարձրանալով, վտար է քարշ տալով յնվ առողջ ձեռնով աքոսները բռնելով, մտնում է դռնը:

ՉԱԴՈՎ. Ընկերներ... (Աղմուկն ընդհատվում է) Այդ ի՞նչ դիսկուսիա յե՛:

ԿԱՇԻՐԻՆԸ բաց է բողբոսն ՆԻԿԻՏԻՆԻՆ, վորը վեր կենալով, դժվարությամբ շնչում է շփոթված դարձնելով գլուխը:

ԳԱԼԻՆԱ. (Բացառելով) Դու ինչո՞ւ յես վեր կացել: Նստի՛ր: (Նստեցնում է հորը):

ՉԱԴՈՎ. Ի՞նչ առիթով եր վեճը:

ԳԱԼԻՆԱ. Նա բողբոսով լսելը կորցրել է: Խուլիվանում թյունն է անում: Խանդում է:

ՉԱԴՈՎ. Ի՞նչու: Փորձը ցույց է տվել, վոր լսանդն անմիտ է աննպատակ բանն է, և, բացի դրանից, Գալինան թեպետ ջոկինն է, բայց ջո մասնավոր սեփականում թյունը չէ:

ՆԻԿԻՏԻՆ. Կորե՛ք:

ՉԱԴՈՎ. Մի շարունակիր, Տեղյա, ամեն ինչ պարզ է:

ՆԻԿԻՏԻՆ. Տե՛թե քեզ իմ ներկայությունը հաճելի չէ, կարիք չկա վոր դու գնաս, յես ինքս կհեռանամ:

ԳԱԼԻՆԱ. Մենք ել կհեռանանք: Պավել, ոգնիր ինձ: (Չադովի քեվերից բռնած ձեռքում են: Գալինան հորը նստեցնում է բազմոցի վրա) Նու, ի՞նչ կասե՛ք: Ի՞նչ է պատահել նրան:

ՉԱԴՈՎ. Եմոցիայի կուտակում: Իր համար ել հեշտ չէ:

ԳԱԼԻՆԱ. Ինչո՞վ է վերջանալու այս ամենը: Չգու՞մ եմ, վոր վատ բան է լինելու:

ԿԱՇԻՐԻՆ. Այո, վատ է:

Այդ միջոցին ՆԻԿԻՏԻՆԸ, անկողնից վեր ցատկելով, պատից վերցնում է ասթեմապը, մտնում է միջնորմին: Կանգնում է դռն մտ, մտախոս:

ՉԱԴՈՎ. Հետաքրքիր է, ի՞նչ է անում նա այնտեղ:

ԳԱԼԻՆԱ. Կարծես մեկը կանգնած է դռան յետեվ:

ԳԱԼԻՆԱ. Հարկավոր չէ, Պավել, հարկավոր չէ:

ՆԻԿԻՏԻՆԸ, յես բաշխով դռնից, շուրջ դուրս է փախչում սենյակից:

ԿԱՇԻՐԻՆ. (Գալինային կամացուկ հեռացնելով) Դատարկ բանն է: (Դուրս բացում է) Մարդ չկա:

ԳԱԼԻՆԱ. (Նայելով սենյակը) Գնացել է: Անհանգիստ եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչինչ, թարմ ոդում ուշքի կգա:

ԳԱԼԻՆԱ. Պավել, գիշերը մնա մեկ մոտ: Ահա այստեղ, բազմոցի վրա: Հայրիկ, կարե՛լի յե՛:

ՉԱԴՈՎ. Չեմ առարկում, թե չե կվերադառնա ու կսկսի աղմկել, իսկ յես վատ բանք ամառաբերիկ եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրախությամբ:

ԳԱԼԻՆԱ. (Նրան մի կողմ ցանկելով) Միայն խնդրում եմ, այսոր նախագծի մասին խոսք չբանալ, այլապես ամբողջ գիշերը նա չի հանգստանա: Գու՞նը նրա համար սրիակ դեղն է: Աղաչում եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Խոստանում եմ՝ մինչև ավելի հարմար առիթի:

ԳԱԼԻՆԱ. Մենք դեռ կտեսնենք: Գազան: (Հոր ախանջին) Իսկ սոմաք մենք վաղը կփակցնենք:

ՉԱԴՈՎ. (Բեմից դուրս) Դու գիտես:

ԳԱԼԻՆԱ. (Բարձր) Այդ տեսարանը քեզ շատ հուզեց:

ՉԱԴՈՎ. Ամենևին: Ընդհակառակը, նա իմ մեջ վճռական միտք առաջացրեց. պարզվում է, վոր յես ընդունակ եմ քայլել սենյակում: (Կիսաբարձրաբանալով) Ահա վասիկ... (Գալլում է) Ա՛ջ... Դուրս է գալիս, վոր յես աջ թեքում ունենա: Ա՛յ: Թեկուզ դեմոնստրացիայի կարող եմ դուրս գալ:

ԳԱԼԻՆԱ. (Ուժով նստեցնում է) Նստի՛ր, ծեր չարաճճի: Նստի՛ր:

ՉԱԴՈՎ. Թույլ սուր քիչ ել վարժություն անեմ:

ԳԱԼԻՆԱ. Նստի՛ր:

ՉԱԴՈՎ. Սա ցույց է տալիս, վոր յես գեռես կիսով չափ առողջ եմ: Այստեղից հարց է առաջ գալիս. յեթե յես կարող եմ սենյակում քայլել, ուրիմն ինչո՞ւ չքայլել, ասենք, մինչև գիտական խորհուրդը:

ԳԱԼԻՆԱ. Ինչե՛ր ես ասում:

ՉԱԴՈՎ. Տե՛թե յես կիսով չափ առողջ եմ, մի՞թե այդ կեսը չի բավականացնի զեկուցման համար:

ԳԱԼԻՆԱ. Խիղճ տեղն է,

ՉԱԴՈՎ. Յես հարց եմ տալիս, յի՞թե յերրորդ վճռական հար-
վածն անխուսափելի յե, ապա ինչո՞ւ այդ հարվածը չստանամ,
ասենք, զեկուցումից հետո:

ԳԱԼԻՆԱ. Բայց քո այդ դրուժյան մեջ և ջղազրգիւ վիճա-
կում, դա կարող ե՞ պատահել նաև զեկուցումից առաջ: Ի՞նչ
միտք կա:

ՉԱԴՈՎ. Յես կորցնելու վրչինչ չունեմ, բայց նվաճել կարող
եմ տաք հոսանքը:

ԳԱԼԻՆԱ. Բայց դա անմտությունն ե: Բժիշկը վճռականապես
հավատացնում ե, վոր կես ժամ ել չես դիմանա: Չեմ թողնի:

ՉԱԴՈՎ. Իմ սիրելի աղջիկ, թեպետ և յես քո հայրն եմ,
բայց քո մասնավոր սեփականությունը չեմ:

ԳԱԼԻՆԱ. Բայց չե՞ վոր դա ոխիկ ե: Դու գնում ես դեպի
հաստատ և աննպատակ մահը: Յես չեմ ուզում այդպես անմտորեն
կորցնել քեզ: Չեմ ուզում:

ՉԱԴՈՎ. (Առողջ ձեռքով փայփայելով նրան) Հա՛վատա ինձ,
աղջիկս, յես նույնպես չեմ ուզում քեզնից բաժանվել: Բնավ չեմ
ուզում, բայց ի՞նչ կարող եմ անել:

ԳԱԼԻՆԱ. Բայց չե՞ վոր դու նոր միայն ասում եյիր, վոր
պատրաստ ես ապրել մի ականջով և մի աչքով, միայն թե տես-
նես աշխարհը և լսես նրա հնչյունները:

ՉԱԴՈՎ. Դա վերացականն ե, իսկ իրականում վերջավորու-
թյունն անխուսափելի յե: Դամոկլոյան սուրը յի՞թե վո՞չ այսոր,
սակայն վաղն իջնելու յե իմ գլխին: Պետք ե շտապել, շտապել:
(Վճռական) Վաղը չե մյուս որը հրավիրում եմ խորհուրդի նիստ:

ԳԱԼԻՆԱ. (Իրեկն կորցրած) Իմ բարի, իմ լավ Պավել, ոգնիք
ինձ: Ի՞նչ ես կոճղի պես կանգնել ու լուում:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ, ավելի լավ ե յես նրան կողնեմ:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ ես ուզում ասել դրանով:

ԿԱՇԻՐԻՆ Յես նրան զեկուցման անողը կհասցնեմ:

ՉԱԴՈՎ. Կեցցես, Պավել, կեցցես:

ԳԱԼԻՆԱ. Դու չար վոգի յես:

ՉԱԴՈՎ. Գալտիկա, լսիր, դու պետք ե հաղթահարես քո զգաց-
մունքները: Դու վախենում ես կորցնել ինձ, իսկ յես վախենում
եմ կորցնել տաք հոսանքը: Իմ վախն ավելի հիմնավոր ե:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ վճիռը, ընկեր Չաղով, յես վաղուց եյի ապա-
տում ձեզանից: Յես նույնիսկ ուզում եյի հիշեցնել ձեզ այդ մա-

սին: չնայած ձեր աղջկա դիմադրությանը և ձեզ այցելելու ար-
գելքին:

ՉԱԴՈՎ. Ահա թե ինչ...

ԿԱՇԻՐԻՆ. Գալինա, յես սկսում եմ կասկածել քո հեղափո-
խական լինելուն:

ՉԱԴՈՎ. Գալինա, խոստովանում եմ, քո համառությունն ինձ ևս
սկսում ե տեսնել յուր պատճառել: Չե՞ վոր յես քեզ դաստիարա-
կել եմ վորպես հեղափոխականի, վորպես իմ իդեալան շարունա-
կությունը: Մի՞թե սեփականության բնաղբը հանդեպ այնպիսի
անպետք մի ծերուկի, ինչպիսին յես եմ, քեզ համարավելի թանգ
ե այն նախագծից, վորը կյանք ե ներշնչելու տունդրաներին և
առաջաներին, լույս ու ջերմություն ե տալու միլիոնավոր մարդ-
կանց:

ԳԱԼԻՆԱ. (Շփոթված) Այդ բոլորը յես հասկանում եմ, բայց...

ՉԱԴՈՎ. Ինչ «բայց» կարող ե լինել: Յես այժմ զգացի, թե
ինչպիսի պահպանողական ինստիտուտ ե հանդիսանում ընտանիքը.
(Միանգամայն լուրջ) Գալինա, ահա քո առաջ գիլե՞մա. կամ ոխիկի
յեսթարկել հորդ կյանքը, կամ կորցնել այն, վորը յերկրին նոր,
հարուստ յերկրամաս տալու հնարավորությունն ունի: Յես պա-
տասխանի յեմ սպասում:

ԳԱԼԻՆԱ. (Մտախոհ սարված, խոնարհում ե գլուխը համառ նայ-
վածքների հանդեպ: Լարված սպասողական պաուզա: Խորը ռեչելով,
բարձրացնում ե գլուխը) Դու յե՞րբ ես նշանակում նիստը:

ՉԱԴՈՎ. Վաղը չե մյուս որը:

ԳԱԼԻՆԱ. (Դանդաղ մոտենում ե հեռախոսին յեվ վերցնում ե
հեռափոփը) 5—44—43. պրոֆեսոր Սավիչին: Բարի յեղեք:

ԿԱՇԻՐԻՆ. Յես յետ եմ վերցնում իմ առածը:

ՉԱԴՈՎ. Իսկ յես չեյի կասկածում:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՉՈՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՉԱԴՈՎԻ ՉԱՅՆԸ. Այն է լավ, ինչ լավ է վերջանում:
ԿԱՇԻՐԻՆԻ ՉԱՅՆԸ. Չգուշ, զգուշ: Դուռը բացիք:

ԿԱՇԻՐԻՆԸ, ՉԱԴՈՎԸ, ՍԱՎԻԶԸ մտնում են սենյակ:

ՉԱԴՈՎ. (Ուրախ) Այնուամենայնիվ Հովֆշարոմը լինելու յե
Հյուսիսում:

ԿԱՇԻՐԻՆ. Անմիջապես քնել:

ՉԱԴՈՎ. Այո... Այո... քնել:

ՍԱՎԻԶ. Որչեղտիվորեն յես ցարական պոմպոզություն գրուցի
մեջ ընկա:

ՉԱԴՈՎ. Նու, ինչու այդպիսի անհաճելի անալոգիա: Դատարկ
բան է: Այնքան էլ սարսափելի չէ: Բարձր բարձրացրեք: Ահա
այդպես: Շնորհակալություն: Դրսում դարուն է: Ամեն ինչ ծաղ-
կում է: Կյանքը մահ է ծնում: Մահը կյանք է ծնում: Հավիտե-
նական պերպետություն մոբիլի: — Այդ բոլորն այդպես: Բայց չե՛
վոր իմ կյանքը դեռ չի սպառվել: Ինչո՞ւ ժամանակից շուտ մեռնել:

ՍԱՎԻԶ. Դա բնավ պարտադիր չէ: Դու կապրես:

ՉԱԴՈՎ. Չեմ առարկում: Բժիշկների քիթը կտարվեց: Յե՛վ
զեկուցումն է արվել, և՛ զեկուցողն է կենդանի: Իսկ Դալոչկաս
անհանգստանում է: Չանգահարելիք նրան:

ԿԱՇԻՐԻՆ. Չանգահարել եմ: Իսկույն կգա:

ՍԱՎԻԶ. Այո, դու կարող ես հանգիստ ապրել: Յես անձամբ
ամեն ջանք գործ կդնեմ, վորպեսզի քո նախագիծը մտնի մեր
գիտություն ֆոնդը: Իմ մտքի յերկչառությունը հանդեպ քո նա-
խագծի թափի և հանդգնություն՝ անուշադրություն՝ մատնեց

զլխավոր մանրամասնությունը: Յես նշանակություն չավեցի
մուսոններին, տաք քամիներով նրանց հագենալուն, այն բանին,
վոր նրանք հավիտենական սառուցման վիճակում տաք ողային
սյունի յեն վերածվում:

ԿԱՇԻՐԻՆ. (Ընդմիջելով) Ներողություն: Դիակուսիան՝ վաղուց
ե վերջացել:

ՍԱՎԻԶ. Այո... այո... Ներեցիք: Յես միայն ուզում եմ ասել
հետևյալը. յես, հին գիտնական առնետ, միայն այժմ իսկապես
հասկացա, թե ինչ է նշանակում գիտություն մեջ հեղափոխական
լինել, թե ինչպիսի խորը իմաստ կա այդ խոսքերում: Յես ինձ
առաջավոր մարդ եյի համարում, բայց իրականում դուրս յեկա
պահպանողական: Որչեղտիվորեն յես կարող եյի փաստաբար դուրս
գալ: Չզղում եմ, Ալեքսեյ Վասիլյեվիչ, մեղավոր եմ...

ՉԱԴՈՎ. Յե՛վ թող զմեզս պարտապանաց մերոց...

ԿԱՇԻՐԻՆ. Ամեն: Դրանով էլ վերջացնենք: Հարկավոր է թույլ
տալ վոր հոբելյարը հանգստանա:

ՍԱՎԻԶ. Այո, այո: Յես բոլորովին մոռացուցի յես ավեցի, վոր
դու ստեղծելի հոգնած ես: Յես դարձյալ կգամ ձեզ մոտ:

ՉԱԴՈՎ. Անպայման: Միայն թե շատ ականջի յետև չզցես,
յեթե ուզում ես ինձ դեռ ևս տեսնել այս աշխարհում:

ՍԱՎԻԶ. Մենք քեզ բաց չենք թողնի, չենք թողնի: Մնաք
բարով:

Գնում են հարեվան սենյակ:

ԳԱՂԻՆԱ. (Վազելով ներս է գալիս) Հը, ինչ կասեք:

ԿԱՇԻՐԻՆ. Ամեն ինչ կարգին է: (Նստն է աճում մնալ) Սպա-
սիր, թող հանգստանա:

ԳԱՂԻՆԱ. (Հոգնած ընկնում է արուի վրա, Եպրսում է պոս-
Ֆեյլը. գլխաբեր) Ո՞՞՞... այնպես եյի շտապում, հուզվում եյի: Իսկ
արտագրական խորհրդակցությունը, կարծես պիտավորյալ կեր-
պով, յերկարեց: Ծերուկը յերկամ խոսեց:

ԿԱՇԻՐԻՆ. Յերկու ժամից ավելի: Սկզբում խոսում եր հան-
գիստ, ընդմիջումներով, ինչպես մենք նրան սովորեցրել եյինք.
բայց զեկուցման յերկրորդ կեսին սկսեց շտապել, ձայնը խզվեց,
շունչը կտրվեց:

ՍԱՎԻԶ. Մանր դրուսություն եր, բայց վոչ մի կերպ չե՛ր կարելի
նրան կանգնեցնել:

ԳԱԼԻՆԱ. Իսկ արդյո՞հնքը: Արդյո՞հնքը:

ՍԱՎԻԶ. Միանգամայն զրական:

ԳԱԼԻՆԱ. Ինքը գո՞հ ե:

ԿԱՇԻՐԻՆ. Յերջանիկ ե:

ԳԱԼԻՆԱ. Նշանակում ե ձեր կասկածները, Սերգեյ Միխայիլովիչ, իդուր եյին:

ՍԱՎԻԶ. Մի ասեք: Յես խղճի խայթ եմ զգում: Չե՞ վոր իմ պատճառով Ալեքսեյ Վասիլյեվիչը տառապեց, տանջվեց, իմ պատճառով թերևս պակասեց նրա կյանքի առանց այն ել կարճ որերը: Հանցանքս քաղելու համար այսուհետև յես իմ բախտը կապում եմ նրա հախազժի հետ:

ԳԱԼԻՆԱ. Շատ ուրախ եմ: Այժմ պետք ե աշխատել նրա համար ծայրահեղ հանգիստ պայմաններ ստեղծել:

ՍԱՎԻԶ. Յես անձամբ միշտ ձեր տրամադրության ասկ եմ: Մշտապես կարող եք դիմել ինձ:

ԳԱԼԻՆԱ. Շնորհակալություն, Սերգեյ Միխայիլովիչ: Շատ ուրախ եմ, վոր հին բարեկամները հաշտվեցին:

ՍԱՎԻԶ. Յես ավելի ուրախ եմ, Յանսություն: (Հրածեօս ե քայլո յիվ գծում):

ԿԱՇԻՐԻՆ. (Ժպտալով) Հուսով եմ այժմ փոխած կլինես կարծիքդ իմ գազանության մասին:

ԳԱԼԻՆԱ. (Ձեռք պարզելով) Հաշտություն: Գժառությունից հետո—կրկնակի բարեկամություն:

ԿԱՇԻՐԻՆ. (Սեղմում ե պարզած ձեռք յիվ յեկտար պահում) Շատ ուրախ եմ: Յես, լոռտովանում եմ, վերջերս շատ եյի տըխրում:

ԳԱԼԻՆԱ. Միթե այդպիսի քնքուշ մանկիկը կարող ե ախրել:

ԿԱՇԻՐԻՆ. Յերևակայիր:

ԳԱԼԻՆԱ. Ձեռքս բաց թող: Յավում ե: Իսկ յես շատ եմ վերավորել ձեզ:

ԿԱՇԻՐԻՆ. Գանգատվել չեմ կարող:

ԳԱԼԻՆԱ. Վոչինչ: Դա ոգտակար ե քեզ: Հարկավոր կգա:

ԿԱՇԻՐԻՆ. Շնորհակալ եմ ուշադրությանդ համար:

ԳԱԼԻՆԱ. Այսոր ինչո՞ւ յես այդպես յերազական:

ԿԱՇԻՐԻՆ. (Հառաչում ե):

ԳԱԼԻՆԱ. Դուրս ե գալիս, վոր կարող ես նաև հառաչել: Դա նորություն ե:

ԿԱՇԻՐԻՆ. Ինձ հարկավոր ե տեսնել Յյորդրին: Նա վճրատեզ ե լինում:

ԳԱԼԻՆԱ. Գարեջրատանը: Ինչո՞վ ե վերջանալու այդ ըորրբը:

ԿԱՇԻՐԻՆ. Գալիս ե: Դայլվածքից կարելի յե վորոշել, վոր հարբած ե:

ՆԻԿԻՏԻՆ. (Չափազանց բնկնված, սափրված չե, խոտում ե ինճիբեկ) Հետախուզության ժամանակ ընկա սախտակների թիկունքը: Շկուրովցիները յեթե բռնեյին, կաշիս կմաշկեյին: Մի քանի որ գազանի նման թագնվեցի յեղեգնուտի ե մացառների մեջ, բայց ե այնպես այնքան հոգեմաշ չեք, ինչպես այժմ: Այն ժամանակ յես հույս ունեյի մերոնց մտա ընկնել, հասնել նրանց, իսկ այժմ, վոչ մի հույս, վոչ մի կերպ չեմ հասնի: Դնացքը հեռանում ե, յես վազում եմ, ձայն եմ տալիս նրա յետևից, բայց չեմ հասնում: Կուլտուրան ե պակասում: Ինչո՞ւ յես այսքան զրքեր հորինել: Ինչո՞ւ համար ե այսքան դասադիրքը: Ավելի լավ չե՞ր նախնական կոմունիզմը: Վոչ մի գիրք, վոչ մի թերթիս, վոչ մի ուսում:

ԿԱՇԻՐԻՆ. (Հեզեակամ) Մեջքին գազանի մորթի, ձեռքին դանակ:

ՆԻԿԻՏԻՆ. Կինը յեթե դավաճաներ, նախամարդ ամուսինը դազանակով գլխին կհասցնեք:

ԳԱԼԻՆԱ. (Նրա տնով, կարծես նրան համակարծիք) Իսկ հիմա այդպես չե: Ամեն բանի համար գազանակով ձեռքերին ես խփում:

ՆԻԿԻՏԻՆ. Մարդիկ գյուտեր են անում, ստեղծագործում են, կլիմա յեն փոխում:

ԿԱՇԻՐԻՆ. Ափսոս չե՞ նստել քարանձավում, ե վոտքով քիթը քշվորել: Վրիպեցիր դու, Յյորդր: Միթե ընկերներդ քեզ չեն ընդառաջել:

ՆԻԿԻՏԻՆ. Նու, յեթե յես այդպիսին եմ, ինչո՞ւ առաջ վզակոթիս չտվին:

ԳԱԼԻՆԱ, Այո, դա ճիշտ ե:

ԿԱՇԻՐԻՆ. Կուսակցականի նման չես դատում: Լավ չե:

ՆԻԿԻՏԻՆ. (Վտալի ձայնով) Այո, դու իրավացի յես: Յես այլևս կուսակցական չեմ: Յես այլևս կուստոմս չունեմ:

ԳԱԼԻՆԱ. Ինչպե՞ս:

ԿԱՇԻՐԻՆ. Ի՞նչ ես արել կուստոմսդ:

ՆԻԿԻՏԻՆ. Այսոր առավոտյան ինձ վերահսկիչ հանձնաժողով կանչեցին և տոմսի հետ միասին նագանս ել վերցրին:

ԳԱԼԻՆԱ. Ինչո՞ւ:

ՆԻԿԻՏԻՆ. Ողու պատճառով:

ԳԱԼԻՆԱ. Քանի անգամ քեզ զգուշացրինք:

ԿԱՇԻՐԻՆ. Ի՞նչ ես մտածում անել սրանից հետո:

ՆԻԿԻՏԻՆ. Չգիտեմ: Յեթե Ֆրոնտ լիներ, աշխատանք կզբա-
նեյի, գնդացիքով, հրացանով... ուր ուզես:

ԳԱԼԻՆԱ. Դու այսոր ճաշել ես:

ՆԻԿԻՏԻՆ. Չգիտեմ: Չեմ հիշում: Դա կարևոր չե:

ԳԱԼԻՆԱ. (Վեր կենալով) Գնամ քեզ համար ճաշ պատրաստեմ:

ՆԻԿԻՏԻՆ. Նստիր: Հարկավոր չե: Կոկորդս բացի ողուց, վո-
չինչ չի գնում: Այո... ուր ուզես, հրացանով, ուռնքով:

ԳԱԼԻՆԱ. Մի քղա՛վիր, ձերուհուն կարթնացնես:

ՆԻԿԻՏԻՆ. Ներողություն: Ել չեմ անի: Փառավոր ձերուկ ե:
Լավ աներ ե, բայց փնսան անպետք ե: Թեպետ յես այժմ ինչ
փեսա յեմ: Այժմ, Պավել, դու յես այդ կոչմանը ձգտում:

ԿԱՇԻՐԻՆ. (Ակնարկով զայում ե Գալիմային, վրեժ ուզում եր
խոսել) Ֆյոդոր, այդ մասին յես ուզում եմ քեզ հետ մեկ անգամ
ընդմիջող լուրջ խոսել: Դու լսում ես ինձ:

ՆԻԿԻՏԻՆ. Լսում եմ... Լսում եմ...

ԿԱՇԻՐԻՆ. Վաղուց ուզում եմ, Բայց դու միշտ ել լուրջ չես
յեղել: Յես գնամ, իսկ դու պառկիր, քնիր, վորպեսզի լրջանա-
լուց հետո կարողանանք խոսել:

ՆԻԿԻՏԻՆ. Լավ: Միայն ինչո՞ւ գնաս: Յես կգնամ պատշգամբ,
կպառկեմ թարմ ողում: Ուղեղս հաշմանգամ եմ դարձրել (Գնում ե):

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ ես ուզում ասել նրան:

ԿԱՇԻՐԻՆ. Ասա ինձ, Գալյա, դու սիրում ես նրան:

ԳԱԼԻՆԱ. Յես խղճում եմ նրան: Չնայած պակասություններ
ունի, բայց լավ տղա յե:

ԿԱՇԻՐԻՆ. Բայց խզա՛լ՝ չի նշանակում սիրել:

ԳԱԼԻՆԱ. Այո, դու իրավացի յես: Չգաղտնի անցել ե, իսկ
յերկուսին սիրել՝ հնարավոր չե:

ԿԱՇԻՐԻՆ. Հրժ:

ԳԱԼԻՆԱ. Գուցե իմ անկեղծությունը դուր չի գալիս ընկեր
կաշիքին:

ԿԱՇԻՐԻՆ. Շատ ե դուր գալիս: Միայն թե...

ԳԱԼԻՆԱ. Խանգարում ե սխտե՛մը:

ԿԱՇԻՐԻՆ. Իմ սխտե՛մը վաղուց ե խանգարվել՝ քո շնորհիվ:

ԳԱԼԻՆԱ. Յե՛վ ափսոսում եք, միստրը:

ԿԱՇԻՐԻՆ. Դա իմ կամքն ե:

ԳԱԼԻՆԱ. Շատ հաճելի յե լսել: Այդ դեպքում ինչո՞ւմ ե բանը:

ԿԱՇԻՐԻՆ. Նրանում, վոր մեր մեջ ե Ֆյոդորը:

ԳԱԼԻՆԱ. Այո:

ԿԱՇԻՐԻՆ. Ինձ անհանգստացնում ե Ֆյոդորի վիճակը:

ԳԱԼԻՆԱ. Վոչ պակաս, քան ինձ: Յես կմնամ նրա բարեկամը:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ իսկ պատճառով ել մենք պարտավոր ենք մտա-

ծել նրա մասին:

ԳԱԼԻՆԱ. Բայց ի՞նչ կարող ենք անել մենք:

ԿԱՇԻՐԻՆ. Կա մի միջոց:

ԳԱԼԻՆԱ. Դարձյալ ի՞նչ վոր սոսկալի բան:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ սոսկալի, այլ ծանր, և վոչ թե նրա, այլ ինձ

համար:

ԳԱԼԻՆԱ. Ասա, ասա: Յես ինչ վոր վատ բան եմ նախազգում

նաև ինձ համար:

ԿԱՇԻՐԻՆ. Յես կասկածում եմ, արդյոք դեպի քեզ ունեցած
հարաբերությունը չե՞ արդյոք այն կաթիլը, վորը (ցնում ե նրա

տառապանքի բաժակը: Յես չեմ ուզում, յես չեմ կարող այդպիսի
հարձած հասցնել ընկերոջս, վորը ժամանակին այնքան շատ բան

ե արել հեղափոխության համար:

ԳԱԼԻՆԱ. Դու ուզում ես... Դու վորոշել ես...

ԿԱՇԻՐԻՆ. Չոհել զգացմունքներս՝ ընկերոջս փրկելու համար:

ԳԱԼԻՆԱ. (Ապշած նայում ե) Ի՞նչ... Ինչպե՞ս...

ԿԱՇԻՐԻՆ. Յեթե յես այնպիսի յեսասեր լինեյի, ինչպես դու

համարում ես ինձ, յես նման անձնազոհություն չեյի անի:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում դա քրիստոնեյություն ե:

ԿԱՇԻՐԻՆ. Յես տվյալ դեպքին մոտենում եմ դիտելակրիտիկ:

ԳԱԼԻՆԱ. Յե՛նելով քո բարոյագիտությունից, յես նույնպես

պիտի զոհաբերեմ ինձ և ապրեմ նրա հետ, սիրելով ուրիշին:

ԿԱՇԻՐԻՆ. Սակայն կրիտիկական մոմենտին ընկերոջը թողնել

նույնպես չի կարելի:

ԳԱԼԻՆԱ. (Ընկե՛ված ձայնով) Նշանակում ե դու հեռանում ես

ինձնից:

ԿԱՇԻՐԻՆ. Այո:

ԳԱԼԻՆԱ. Յերբ ես գնում:

ԿԱՇԻՐԻՆ. Վաղը:

Պատգա: Դեմքը վիշտ եմ արտահայտում:

ՉԱԴՈՎ. Չափակես, զափակներս:

ԿԱՇԻՐԻՆ. Կանչում ես:

ԳԱԼԻՆԱ կարծես արքանացած, ցնցում ե գլուխը: Վտախի յե յիջում: Եւս անցնում ե ՉԱԴՈՎի սենյակը:

ՉԱԴՈՎ. Բարե, աղջիկս: Բարե, սիրելի աղջիկս: Կարող ես շնորհավորել, քննությունը բռնեցի:

ԳԱԼԻՆԱ. Լսել եմ, լսել եմ: Շատ ուրախ եմ:

ՉԱԴՈՎ. Տվեք իմ կառքը: (Նստում ե իր սայլակը) Յես ապացուցեցի, վոր իմ նախագիծը ցնորք չե, վոչ ել յերեակայություն, այլ հասաատ գործնականորեն իրագործելի թեորեաիկ միտք:

ԳԱԼԻՆԱ. Յես յերջանիկ եմ:

ՉԱԴՈՎ. Բայց դնչիկդ ինչ՞ու յե այդպես ախուր: Չե՞ վոր յես վողջ եմ, առույզ, դափնիներով պսակված:

ԳԱԼԻՆԱ. Հոգնել եմ, հուզվել: Դու ինչ՞ու այդքան քիչ քնեցիր:

ՉԱԴՈՎ. Քուսնս չի տանում:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում դոնե լսեցիր: Չեկուցման ժամանակ բաժականին խոսել ես արդեն:

ՉԱԴՈՎ. Չեմ կարող, խոսքերն իրենք իրենց դուրս են ժայթքում, ուզում եմ ցատկատել մի վտարով: Սատանան տանի, յերիտասարդացումը յերբ ե սեալ փաստ դառնալու: Ինչ հիմար բան ե մահը: Ո՛ւմն ե հարկավոր նա:

ԿԱՇԻՐԻՆ. Միայն վոչ ձեզ:

ՉԱԴՈՎ. Ճիշտ ե: Թող դեա նրանց մտ, ովքեր կանչում են իրեն, իսկ ինձ թող հանդիստ թողնի:

ԳԱԼԻՆԱ. Դու այդ մասին քիչ մտածիր:

ՉԱԴՈՎ. Այո, դա՛վակս, մենք ասնջանքներով ծնվում ենք, կապիտալիզմը ասնջանքներով մեռնում ե: Յե՛վ յերբ նա վերջնականապես մահանա, մարդկությունը նոր լոզունգ կունենա — մա՛հ մահին:

ԿԱՇԻՐԻՆ. Վատ չե:

ՉԱԴՈՎ. Յես համաձայն չեմ նրանց հետ, ովքեր հա՛վատացնում են, թե ապագայում մարդն այնպես առողջ կլինի ե կյանքից գոհ, վոր մահվան կղիմա՛վորի ժպիտը դեմքին: Հիմարություն:

Չեմ հավատում. յերջանկությունից վոչ վոր չի ուզի մեռնել: Այդպիսի տխմարներ այժմ ել չկան:

ԳԱԼԻՆԱ. Բավական ե:

ՉԱԴՈՎ. Հեղափոխությունից առաջ յես նույնպես անտարբեր եմ յեղել դեպի մահը, յերբ նստած եյի բա՛նտում: Դերագույն անտարբերություն հայտնաբերեց Ֆրունզեն, յերբ մահվան դատապարտված, նա սկսեց անգլիերեն սովորել:

ԳԱԼԻՆԱ. Մենք դուցե անցնենք ավելի ուրախ նյութի:

ՉԱԴՈՎ. Յես իսկույն կվերջացնեմ: Յիրբնի յես մոռանում եմ, վոր կանգնած եմ գերեզմանի յեղբին: Այդպիսի մոմենտներէց ինձ թվում ե, վոր կանգնած եմ հսկա լեռան գագաթին, վոր տեղից պարողորոջ յերևում են մեր շինարարության ուրվագծերը: տեղից պարողորոջ յերևում են մեր շինարարության ուրվագծերը: Միայն վախկոտները, նրա թնդյունից խլացածներն են ականջները խցկում, կնճուռավում, և, աչքերը փակելով, չեն անսնուն հեռանկարները: Իսկ այդ թնդյունը կապիտալիստական ամբողջների հզորագույն ուժակոծումն ե և յերաժշտությունը, վորի հնչյունները վոչ մի յերաժշտագետ ընդունակ չե հաղորդելու:

ԳԱԼԻՆԱ. Հայրիկ, մեզ ազիտացիա մի արա: Մենք դրանում չենք կասկածում: Հանգստացիր:

ԿԱՇԻՐԻՆ. Այո, այո... Ընդմիջում անենք:

ՉԱԴՈՎ. Լավ: Ընդմիջում անենք: Իսկ ո՞ւր ե Յեզյան:

ԳԱԼԻՆԱ. Քնել ե և նույնն ե ցանկանում քեզ:

ՉԱԴՈՎ. (Համբուրում ե Գալիմային) Թանկագին աղջիկս: (Կաշիրիին) Պալել, աուր քո Ֆիզկուլտուրային ձեռքը:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ կարիք կա այդ ցերեմոնիային: Չե՞ վոր դու նրան դարձյալ կտեսնես:

ՉԱԴՈՎ. Չգա ցմուռքի առատությունից:

ԳԱԼԻՆԱ. (Կաշիրիին քեղից քաշելով) Գնանք, այլապես նա չի հանգստանա: (Բարկացած) Քնիր:

Անցնում եմ կից սենյակը:

ԳԱԼԻՆԱ. Այսոր ինձ համար շատ ախուր որ ե, կարծես հուղարկավորություն լինի:

ԿԱՇԻՐԻՆ. Ո՛ւմն ես թաղում:

ԳԱԼԻՆԱ. Չեզ բոլորիդ, սատանաներ: (Անցնում ե Չաղովի սենյակով):

ՆԻԿԻՏԻՆ. Փողոցի աղմուկից արթնացա: Ի՞նչ եյիք ուզում ասել:

ԿԱՇԻՐԻՆ. Կամրող ես լսել ինձ:

ՆԻԿԻՏԻՆ. Դեռ լսելքս տեղն ե:

ԿԱՇԻՐԻՆ. Փեղյա, յես նկատում եմ, վոր իմ ներկայությունն այս տանը թունավորում ե յեթե վոչ քո ամբողջ կյանքը, համե- նայն դեպս, նրա զգալի մասը: Դրա պատճառը խանդն ե:

ՆԻԿԻՏԻՆ. Ո՞վ ասաց քեզ:

ԿԱՇԻՐԻՆ. Հարբած ժամանակ ուղղակի ասում ես, իսկ լուրջ վիճակում՝ թագցնում ես: Այդպես ուրեմն, վորպեսզի սզատած լինեմ քեզ այդ բեռնվածությունից, վաղը յես հեռանում եմ այս տանից:

ՆԻԿԻՏԻՆԸ՝ զարմացած, ակնապիշ նայում ե ԿԱՇԻՐԻՆԻ աչքերին: Կարն պաւզաւ:

ՆԻԿԻՏԻՆ. Ահա թե ինչ... (Պաւզաւ) Զոհաբերություն:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ յես այդպես կարծում:

ՆԻԿԻՏԻՆ. Վորովհետեւ դու շատ ես սիրում Գալինային: Վոր- չափ ել թագցնում եյիր, բայց աչքի յեր ընկնում: Ուղղակի ասա— սիրում ես Գալինային:

ԿԱՇԻՐԻՆ. (Քիչ օտարված) Սիրում եմ... Սակայն մենք միայն բարեկամ ենք յեզեր:

ՆԻԿԻՏԻՆ. Այդպես:

ԿԱՇԻՐԻՆ. Բայց քո վիճակն ինձ համար ավելի թանգ ե: Մեկնելով՝ մի բան եմ միայն պահանջում քեզնից. հանգստացիր և նորից վերսկսիր ուսումը: Համբերիր մի տարի: Չե՞ վոր քեզ- նից ավելի ցած պատրաստականության տեր հազարավոր մարդիկ ապրում են լրիվ կյանքով: Կ'նա շինարարության մեջ աշխա- տելու: Այդ հսկայական սրջնանոցում քեզ համար նույնպես աշ- խատանք կգտնվի, վոգով կամրապնդվես: Մի՞թե մեր յերկրում քիչ տեղեր կան, ուր կարող ես ուժերդ գործադրել: (Նիկիտինը որոտում ե գլուխը) Վերջապես գյուղ գնա, կոլխոզ գնա: Յե՞վ ընդ- հանրապետ կարիք չկա այդ մասին խոսել քեզ հետ, ագիտացիա անել: Մի կորցնիր քեզ, Ֆյոդոր: Ո՞վ կորցնում ե իր գլուխը, նա կորցնում ե կյանքը: Պանիկայի մեջ մի ընկնիր: Մենք մեծ յերևույթների եպոխտյում ենք ապրում: Գիտես ինչ ե ասում ընկրը Չադովը— յեթե կաթվածից ազատ մնա նրա միայն մի աչքը և մի ականջը, վորպեսզի տեսնի աշխարհն ու լսի նրա հնչյուն- ները, այդ գեպընում անգամ նա կյանքից չի հրաժարվի: Իսկ դու միանգամայն առողջ մարդ ես: Յերկու անգամ նրանից յերի-

տասարդ ես: Դեռ քանի տարի ունես առաջդ: Մտածիր: Ուշքի յեկ, ցույց տուր կամքիդ ուժը:

ՆԻԿԻՏԻՆ. (Գլուխը քարելով) Հըմ... այո... Ինչ պատասխանեմ քեզ: Այո, Պավլուշա: Խանդում եյի քեզ դեպի Գալինան, բայց հետո կովելուց հետո, պայքարում եյի զգացմունքներես դեմ: Մե- րունու խոսքերը գլխիցս դուրս չեյին գալիս՝ «Գալինան թեպետ և քո կինն ե, բայց քո մասնավոր սեփականությունը չե»: Յես թեպետ և անկուսակցական եմ, բայց հողով այնուամենայնիվ կոմունիստ եմ և հասկանում եմ ինչ ե նշանակում դա: Թեպետ Գալինային կորցնելը ծանր ե ինձ համար, բայց նա իմ ստորուկը չե, ճորտը չե: Ի՞նչ նպատակով պայքարեցինք: Լուրջ վիճակում խանդը յես ատամներովս պոկում եյի սրտիցս: Ինչ վերաբերում ե քեզ, ինչ վերաբերում ե այն բանին, վոր դու իմ պատճառով հեռանում Կս Գալինայից, ինչ ասեմ... Լավ ընկեր ես դու: Յեզել ես և կաս: Ահա բուրբը:

ԿԱՇԻՐԻՆ. Նու, լավ, բավական ե... Ի՞նչ կարիք կա: ՆԻԿԻՏԻՆ. Սպասիր: Իմ վիճակի հարցը դժվար խնդիր ե: Ասում ես, վոր ինձնից ցած կանգնած հազարավոր մարդիկ կան. այո, կան: Բայց ինչ ե նշանակում այդ: Այդ նշանակում ե ցած իջնել, յերբ այդ ցածինները վեր են բարձրանում:

ԿԱՇԻՐԻՆ. Յես քեզ առաջարկում եմ վոչ թե ցած իջնել, այլ աշխատել ցածում յեղածների հետ:

ՆԻԿԻՏԻՆ. Բայց ցած գնալ սովորեցնելու համար— դա մի բան ե, իսկ ցածում թրև գալն ուրիշ ե: Ինչ կարող եմ յես տալ: Ինչ սովորեցնեմ, յերբ այդ ցածում յեղած հազարները գերաճել են սովորեցնեմ, յերբ այդ ցածում եմ իմ գլխի վրայով, լողում ինձանից: Ալիքների նման թռչում են իմ գլխի վրայով, լողում են հետու, իսկ յես լողաթաղանթի նման որորվում եմ կանգնած տեղում: Հի՞ճւմ ես Տրոֆիմ պապիս: Պատահում եր, նստում եր հողաթմբերի վրա և ամբողջ օրը հայացքը հառում եր փողոցին, փողոցի կյանքն եր դիտում: Յես այդպես ապրել չեմ կարող, — չեմ կարող նստել հողաթմբին և համաշխարհային դեպքերը դի- տել:

ԿԱՇԻՐԻՆ. Թն, ստատնա... ո՞վ ե քեզ ստիպում հողաթմբի վրա նստել:

ՆԻԿԻՏԻՆ. Ասում ես մի տարի համբերեմ, բայց, տաբին յե- րեք հարյուր վաթսուս հինգ ուր ունի: Իսկ յերաշխիք կա՞մ, վոր մի տարում յես կարող եմ ուղղվել: Յես անբուժելի յեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ Այդ ի՞նչ ես մտցրել գլուխդ:
ՆԻԿԻՏԻՆ. Ե՛խ, ՊաՎլուշա, դու ինձ չես հասկանում: Ի՞՞մ բանը
վերջացած է:

ԿԱՇԻՐԻՆ. Վերջի վերջո ինչ ես մտադիր անել:

ՆԻԿԻՏԻՆ. Չգիտեմ, չեմ իմանում:

ԿԱՇԻՐԻՆ. Դա պատասխան չէ:

ՆԻԿԻՏԻՆ. ՊաՎլուշա. քեզնից մի բան եմ խնդրում:

ԿԱՇԻՐԻՆ. Առա, ինչ վոր ուժերս թույլ տան, կանեմ:

ՆԻԿԻՏԻՆ. Մի գնա: Մնա Գալիսայի հետ:

ԿԱՇԻՐԻՆ. (Նվառած) Հը՞մ... Խոստովանում եմ, յես այդ չեյի
սպասում:

ՆԻԿԻՏԻՆ. Հարուժաչ եմ արել յես նրան: Գեղ հետ հանգիտա
կառնի: Նա լավ ընկեր է, հաղավաղյալ:

ԿԱՇԻՐԻՆ. Չուր ես այդ ասում: (Վնուակամ) Վաղը գնում եմ:
վճռված է:

ՆԻԿԻՏԻՆ. Ի՞նչ այնուամենայնիվ վորոշել ես հեռանալ:

ԿԱՇԻՐԻՆ. Անպայման:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչ արած: Գնաս բարի, (Անուր գրկում է) Անհի-
շաչար յեղիբ:

ԿԱՇԻՐԻՆ. Յես դեռ կգամ քեզ հրաժեշտ տալու:

ՆԻԿԻՏԻՆ. Լավ, արի:

ԿԱՇԻՐԻՆ. Ա՛խ, Ֆեդյուխա, տրամադրությունների ազդեցու
թյան ես յենթարկվում, զանվում ես մոմենտի տպավորության
տակ: Կանցնի,—հետո ինքդ քո մտքերի: Ինքդ քեզ վրա կծիժա-
ղես: (Գնում է):

ՆԻԿԻՏԻՆ. (Հեսեվից մտածկոտ կրկնում է) Գտնվում ես մոմենտի
տպավորություն տակ: Կանցնի,—հետո ինքդ քեզ վրա կծիժա-
ղես... Հը՞մ... Չես գնա, յեղբայր, չես գնա: Յես քեզանից շուտ
կթոշեմ: (Հոգնած բնկնում է արտաքին: Միում է գլուխը) Յավում
է... Սպասիր, յես քեզ անմիջապես կբժշկեմ: (Մոտենում է պատին,
ուր առաջ նազանն եր կախած: Անողնական օտրժում) Վերցրին:
(Վերցնում է բանալի յեվ բուլդ) Ի՞նչ գրեմ... Դուրսս բթացել է...
(Դառն ծիժաղ) Նույնիսկ մահվան մասին յերկտող գրել չգիտեմ:
(Դում է, մի քանի բառից հետո բնկնում) Մոմենտը կանցնի...
(Խոր մտածում է: Ինքն պարզվում է: Առաջ օտրժումով պատում
է գրածը: Վերցնում է նոր թերթ: Հանգիտ յեվ վնուաշուն նորից
գում է) Ահա... (Վեր կենալով) Դե, (Չուս կողմը նայելով, ծած-

կում է գլխադ) Մնա բարով Գալիչկա: (Հեռանում է, դուռը
բաց բողնելով):

ԳԱԼԻՆԱ. (Մոտենալով վրա մի բաժանի ձեռքի, կամաց, վոս-
քի մոտենի վրա մոմենտ է Չադովի սենյակը) Գնած է: (Բաժանի
կարը դնում է սեղանի վրա: Նույնպիսի կամացուկ ֆայերով անց-
նում է մյուս սենյակը) Ի՞նչ է պատահել: (Խիս վախեցած) Ո՛ւր
են գնացել: (Սեղանի վրա բուլդ սեռնելով, վերցնում է յեվ կար-
դում: Կանգնում է ֆառացած դիտելով):

ԿԱՇԻՐԻՆ. (Յերեկալով: Կանգնում, մի բան հիշելով) Ֆյոդոր:
(Նայելով Գալիսային): Ի՞նչ է պատահել...

ԳԱԼԻՆԱ յերկտող տալիս է նրան:

ԿԱՇԻՐԻՆ. (Կարդում է) «Դուրս գու իրավացի յես, Գալիչկա:
ՊաՎլուշա: Մոմենտ է: Տրամադրություն: Կիրոնի դարձյալ տեղ
գտնել մեր մըջնանոցում: Իսկ հետո, կատանե՞ք: Մնաք բարով:
Մնաք բարով, Գալիչկա»: (Պատկա) Այդպես... (Նսրից պատկա:
Հուզմունք յեվ անհարմար դուրսյուն) Մերուկը կանչում է... գը-
նանք:

ԳԱԼԻՆԱ. (Դուրսը ցնցելով) Գնանք: (Մոմենտ են Չադովի սե-
նյակը) Գեղ թվացել է: Նա քնած է:

Ուղարկւթյամբ նայում են ՉԱԴՈՎԻ դռնին: Վախեցած ունկնդրում են նրա շնչա-
աւրյանը: ԿԱՇԻՐԻՆԸ գգուշությամբ շշտփում է նրա մեքը...

ՉԱԴՈՎ. (Աչքեր բանալով) Տո՞թ է: Չավակներս, լուսամուտը
բաց արեք: (Կօտրինն ուժեղ օտրժումով բացում է լուսամուտը:
Գառունն է ներս քափանցում):

ՉԱԴՈՎ. (Խոր լուրջում է: Յույց տալով լուսամուտը) Կյանքը
կանչում է:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր



«Ազգային գրադարան»



NL0311373

212

ԳԻՆԸ 1 Ռ. 50 ԿՈՊ.

На армянском языке
В. Н. БИЛЛ-БЕЛОЦЕРКОВСКИЙ

ЖИЗНЬ ЗАВЕТ

Пьеса в 4-х действиях



АРМЕНИЗДАТ — ЕРЕВАН